

№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1885

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№№ 5—6

I. Կաթողիկոսի ընտրութիւնը
II. Երգ (Վիքթօր Հիւգօյից) . . . . . Բաֆֆի.
III. Անյաղողօս (պատկեր) . . . . .
IV. Իվան Կուլիբին (ռահբէնից թարգմ.) Ա. Ծատուրեան.
V. Ո՞վ աւելի ճարպիկ է (մի վոլքրիկ ոգբերգութիւն 9 արարուածով . . . . . » »
VI. Առաջին վաստակ (վոլտաբ. ռահբէնից) Լ. Միլիք-Ադամեան.
VII. Գերեզման (բանաստեղծութիւն) . . . Լեռնից։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

VIII. Բուսական աշխարհից . . . . . Կ. Մ.-Շահնազարեան.
IX. Տեղ վոլխուելու գանագան մեջոցները (կըշարունակուի)։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպագրական նոր մեքենայ։ Ծխնեռնակի թռչելու արագութիւնը։ Աւազաղաց։ Ջրի ժամացոյց։ Կօկայ բոյսը։

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

Անեկդօտ։ Տպարանական հանաք։ Հանելուկներ (3 հատ)։ Շուտասխլով։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Որովհետև «Աղբիւրի» ներկայ տարուան առաջին երեք համարները (յունուար, փետրուար և մարտ) բոլորովին սպառուել են, այդ պատճառով խմբագրութիւնս ստիպուած է տարեկան բաժանորդագրութիւնը դադարեցնել։ Բաժանորդ գրուել ցանկացողները կարող են պարձեալ 3 ռ. ուղարկել և առաջին երեք №№-ի փոխարէն ստանալ մեր հրատարակութիւններից 75 կոպէկի գրքեր իրանց ընտրութիւնով։ № 4-ից ստանալ ցանկացողները պէտք է ուղարկեն 2 ռ. 70 կ. և կըստանան նոյնպէս երկու պրէմիայ։

Հրաւիրում ենք թէ մեր սեպհական գործակալներին և թէ այն բաժանորդներին, որոնք մինչև այժմ դեռ չեն վճարել «Աղբիւրի» բաժանորդագինը, բարեհաճեն անյապաղ հասցնել այն խմբագրութեանս։ Հետևեալ №-ից առանց բացառութեան թէ «Աղբիւր» և թէ երկրորդ պրէմիան՝ Պարոյր Հայկազն և Մովսէս Խորենացին կուղարկուին միմիայն նրանց, որոնց վճարն ստացած կըլինինք։

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵԹԱՆԵՔԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№№ 5—6

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1885

ГЕРОЙ

ВЕЛИКОЙ ФРАНЦУЗСКОЙ РЕВОЛЮЦИИ

ВЕЛИКОЙ ФРАНЦУЗСКОЙ РЕВОЛЮЦИИ

ГЕРОЙ

№№ 5 6

ИЗДАНИЕ – ВОЙЛОВ

ԻՋՄԱՆ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՈՒՄ՝
ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ, ՄԵՐ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱ-
ԻՈՐՉԻ ԳԱՀԻՆ ԱԹՈՌԱԿԱԼԱՑՈՒ
ԸՆՏՐՈՒԵՑԱՆ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՍՐԲԱԶԱՆԸ

(ՄԻԱՉԱՅՆ)

ԵՒ

ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ

(16 ՉԱՅՆՈՎ)։

ԵՐԳ

(† Վ. ՔԹՈՐ ՀԻՒԳՕԼԻՑ)

Ինչ եղաւ մարին։—Մեռած է վաղուց։
Իսկ նրա որձիկը։—Կատուն թռցրուց,
Միսն ու ոսկորը լափեց, կլանեց,
Եւ փետուրները հողմերուն տուեց։
Անտէր բնի մէջ ով է դողդողում,
Ո՞վ է տխրաձայն այդպէս հառաչում,
Ո՞վ կը խնամէ ձեզ, խղճուկ որբիկներ,—
Ոչ ոք։ Թշուառ փոքրիկ թռչնիկներ։

Ծոյլ և խաբեբայ հովիւը բացակայ։
Մեռած է շունը, էլ հսկող չկայ։
Գայլն է թափառում խուլ մռնչիւնով,
Իր սեւ ցանցերը լարում է փուճով։
Ահ ու սարսափ է տիրում վարախում,
Դող ու տենդով են օրտեր բաբախում։
Ո՞վ կը դարձեցնէ քնած ոչխարին,
Ո՞վ կը պատերազմէ ընդդէմ այդ չարին,—
Ոչ ոք։ Թշուառ փոքրիկ գառնուկներ։

Աքսորանոց մէջ, հեռու, տարագիր,
Կրում է հայրը վիշտ տաժանակիր։
Մայրը տառապեալ, հալումաշ եղած,
Հիւանդանոցում,—այնտեղ է ընկած։
Փչում է քամին իր թափով ուժգին,
Դողում է տնակը, մօտ է կործանման,

Եւ նրա մէջուն, անտէր, անպաշտպան,
Դողում է օրօրոց որբացած մանկան։
Ո՞վ մնաց այնտեղ։—Ոչ հայր, ոչ մայրիկ,
Դու մէյն մնացիր,—դո՛ւ, խղճուկ մանկիկ։

ՐԱՖՖԻ։

Մայիսի 10-ին Ֆրանսիան կորցրեց իր ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ, ամբողջ աշխարհը ողբաց համամարդկային սքանչելի բանաստեղծի մահը։ Վիքթոր Հիւգոն վախճանուեց խոր ծերութեան մէջ՝ ութսուն երեք ամեայ հասակում։ Հիւգոն՝ ինչպէս և բոլոր մեծ բանաստեղծները, անսահման սիրում էր մանուկներին, որոնց գանազան ժամանակներում շատ ու շատ բանաստեղծութիւններ է նուիրել. վերջիններիս հատաքուածներն են մի հատորի մէջ, որ կրում է „Les enfants“ վերնագիրը. այդ գրքից է ազատօրէն թարգմանած և ներկայ բանաստեղծութիւնը։

Մայիսի 16-ին Թիֆլիզի հայ և վրաց մամուլը մի հեռագիր ուղարկեց Փարիզ «Ռապէլ» (Rappel) լրագրի խմբագրութեան՝ իր ցաւակցական մասնակցութիւնը յայտնել տալու Վիքթոր Հիւգոյի մահուան առիթով։ Ա.Հաւասիկ այն հեռագրի բնագիրը.

«Թիֆլիզի հայ և վրաց մամուլը մասնակից է լինում այն համաշխարհային սուգին, որ պատճառեց մեծ հանճարի մահը, որի անմահ գործերը ոգևորում են բոլոր աշխարհը։»

«Խմբագրութիւնները՝ «Աղբիւրի», «Արձագանքի», «Դրօշքայի», «Իմկբայի», «Մեղուի», «Նոր-Դարի» և «Նօրաթիւի»։»

ԱՆՅԱՋՈՂ ՈՐՍ

Պատմեցէք սրա բովանդակութիւնը։

ԻՎԱՆ ԿՈՒԼԻԲԻՆ

ՌՈՒԻՍ ԻՆՔՆՈՒԻՍ ՄԵԽԱՆԻԿ։

Այն բընութիւնը զուրկ չէ տուրքից,
Դեռ այն աշխարհ չէ մեռած,
Որ ծնում է ժողովուրդից
Մարդիկ՝ ծիրքով օժտուած...

Նէկրասով.

I



օնավաճառի օր լինելով, Նիժնի Նովգորօդը սովորականից աւելի կենդանացած էր երեւում։

Ալիւրավաճառ Կուլիբինը՝ կանգնած իր խանութի դրան առաջ՝ յաճախորդին ճանապարհ էր դցում։ Նա իր գործը վերջացնելով յաճախորդի հետ, շուռ եկաւ մտաւ խանութ և նայեց շարքով դասաստած պարկերի յետևը։ Այնտեղ, շտեմարանի հէնց անկիւնում, ալիւրի պարկերի յետևը կուչ եկած, սուսուփուս նստած էր մի փոքրիկ տասներկու տարեկան երեխայ և լինչ որ տաշում էր փայտից։ Նա այնքան եռանդով էր աշխատում, որ չլսեց Հօր ոտնաձայնը։ Նա իր փոքրիկ, խարտեաշ և դանդրահեր գլուխը կախած՝ կապտադոյն և խելացի աչիկներով մի առանձին հրճուանքով էր նայում ձեռքում բռնած փոքրիկ խաղալիքի վրայ։ Երեխան այնքան զեղեցիկ էր, որ նրա վրայ նայողը չէր կարող չհիանալ նրա տեսքից. միայն Հայրն էր, որ

այդ րոպէին յօնքերը կիտած՝ կանգնած էր նրա առաջ։ «Իվան», դոչեց նա վերջապէս անհամբեր և զայրացած ձայնով։ Երեխան սառսռաց և խոլոյն տեղից վեր թռաւ։ Նրա խաղալիքը և ծալուող դանակը շրխկալով գլորուեցան յատակի վրայ։ Նա գլուխը կախ, երկչոտ և այլայլուած դէմքով կանգնած էր, չհամարձակուելով աչքը բարձրացնել իր զայրացած հօր վրայ։

— Ա՛յ անպիտան, ինչ ես շինում դու դարձեալ այստեղ։ Այդպէս ես օգնում հօրդ հա՞, գոռում էր Կուլիբինը։ Դուրս կորիր խանութից և չհամարձակուես այսօր աչքիս երևալ։

Երեխան սկսեց դողդոջուն ձեռքերով ժողովել իր խաղալիքները, բայց հայրը կատաղած ոտներով կխճորեց բոլորը։

— Դէն ածա այդ ամենը, անզգամ դու, գոռում էր նա։

Երեխան հաղիւ զսպելով իր արտասուքը, դուրս վազեաւ խանութից, և մինչև նա տուն կրհասնէր, վիշտը կրճում էր նրա մանկական սիրտը։

Այդ միջոցին Կուլիբինի խանութը մի նոր յաճախորդ մտաւ. խանութպանը նրան հանդիպեց տխուր, յօնքերը կիտած։

— Չը՞, ինչ է պատահել, պեօտր, ինչ ես քթթումուրթդ կախել։ Չիւմնդ ես ինչ է, հարցրեց ներս մտնողը։

— Զնորհակալ եմ մեծապէս. առողջ եմ, միայն տղիս հետ էլ կուռում. նա ինձ սաստիկ բարկացնում է։

— Յիմա՞ր է ինչ է այդ տղան, կարեկցութիւնով հարցրեց յաճախորդը։

— Ոչ, այդպէս էլ չի կարելի ասել. նա բաւականին խելօք տղայ է, պատասխանեց Կուլիբինը։ Ես նրան ուղարկում էի մեր տիրացուի մօտ գիր սովորելու. մտածում էի,— ուսում կառնէ, վաճառականական դործում աւելի պիտանացու կըլինի և, ինչ ասեմ, բանը լաւ դնաց. նա շուտով վերջացրեց այբբենարանը, սաղմոսը, ժամագիրքը, սովորեց գրել և մի ակնթարթում ամենագժուար հաշիւները էր անում։ Էլ սրանից աւելի ինչ էր հարկաւոր։ Ես նրան նստեցրի խանութում, բայց նա, միօրինակ դործի

հետ ընտելանալու և հօրն օգնելու, քաշվում է մի անկիւն և—ինչ ես կարծում, ինչ որ խաղալիքներ է շինում: Ահա, այս էլ քեզ ուսումնական որդի:

—Յաւալի՛ է, եղբայր, յաւալի՛: Ապա մի ցոյց տուր տեսնեմ այդ ինչ խաղալիքներ է շինում քո որդին:

—Է՛հ, ցոյց տալն անգամ ամօթ է, հաւատացիր, կարծես վոքը տղայ լինի. ջրաղացներ և հազար ու մի տեսակ բաներ է շինում: Նայիր, ահա նրա շինածներից մինը, որ յատակի վրայ է ընկած...

Կուլիբինը բարձրացրեց յատակից իր որդու ձեռակերտը և տուաւ իր խօսակցին: Նա ուշադրութիւնով զննելով այդ չափազանց հմտութիւնով տաշած առարկան, զարմացած գոչեց.

—Բայց գիտե՞ս դու, Պետր Իվանիչ, որ այս միայն արհեստագէտ մարդու գործ է:

—Է՛հ, այդպիսի բաներ շատ եմ կոտրատել ու վառարան գցել: Միշտ հէնց այն էլ մտածում, թէ ով գիտէ, գուցէ նա մոռանայ իր այդ չլմաը պարապմունքները, բայց ո՛չ. նա ոչ մի բանի ձեռք չէ տալիս և ամենևին վաճառականական գործերով չէ պարապում, տխրութիւնով ասաց Կուլիբինը:

—Ուրեմն արի դու ինձ լսիր, Պետր Իվանիչ, և էլ որդուդ այդպէս մի նեղիր: Կարելի է նրա ճակատագիրն այնպէս է, որ նա վաճառական չպէտք է լինի: Բայց ինչ ուզում ես արա, այս բանը քեզ չեմ տալ, որ կոտրատես. աւելի լաւ է երեխայոցս համար կըտանեմ, կըխաղան:

—Համեցէք, քեզ ընծայ, պատասխանեց Կուլիբինը.—իսկ հիմա արի մեր գործի մասին խօսենք: Եւ երկուսն էլ խօսք բացեցին ալիւրի մասին:

II

Կիւրակի օր էր։ Կուլիբինի փոքրիկ փայտաշէն տնակում հաշուայ սեղանի շուրջը բոլորած էր նրա ամբողջ ընտանիքը։ Կաղամբաթթանից յետոյ, տանտիկինը սկուտեղի վրայ սերում տապակած խոշոր ձկներ բերեց։ Այս Պետր Իվանիչի սիրելի կերակուրն էր և դրա համար էլ նա ուշադրութիւն դարձրեց պատուական ձկների մեծութիւններին վրայ։

— Ի՞նչ ես տուել այս հսկաներին, Հոգիս, փաղաքշաբար հարցրեց նա իր կնոջը։

— Ոչինչ. որ ասես կոպէկ էլ չեմ տուել. Վանիւշան բռնոտեց նրանց մեր լճակի մէջ։

— Կատակ ես անում ինչ է, պատաւ, ասաց տանուտէրը, մի ակնթարթում խնատ և ահարկու եղանակ տալով իր վաղաքշական ձայնին։

— Նա գիտէր, որ հոտած և երեսը կանաչ լորձունքով ծածկուած լճակում, որը գտնվում էր իր անտէր ու անխնամ թողած այգու մէջ, ոչ մի ձուկ չէր կարող ապրել։ Այդ պատճառով էլ նրան շատ տաբօրինակ թուաց, որ կինը վոտահացաւ իր հետ այդպիսի կատակ անել։

— Իզուր մի բարկանար, Պետր Իվանիչ, ես քեզ հետ կատակ չեմ անում։ Գնա, դուրձերով զբաղուած լինելով, վաղուց է մեր փոքրիկ այգին չես մտել, աչք չես ածել. Վանեան այնպէս մաքրեց, դեղեցկացրեց լճակը, որ այժմ նրա ջուրը պարզ ու մաքուր է և մէջն էլ ամեն տեսակ ձկներ են լողում,— բացատրում էր կինը և նրա քաղցր ու սիրալիր հայեացքը գարձրած էր դէպի իր անդրանիկ և սիրելի Վանեան։

— Ապրիս, մեր տղայ, քրիմնջաց Հայրը և սեղանի մօտից վերկացաւ։ Պետր Իվանիչի բարկութեան բորբոքումը շուտ էր անցնում։ Նա ճաշից յետ Հանդստանալուց յետոյ, վերկացաւ ուրախ և գառնատով որդուն ասաց.

— Ապա, մի ասի քո դեղեցկացրած լճակը ցույց տուր։

Մեծ եղաւ նրա գարմանքը, երբ տեսաւ կանաչների մէջ Հայելու նման վայլող լճակի մակերևոյթը, որի մաքուր

և Հանդարտ ընթացող ջրի մէջ խաղում էին նրա սիրած ձկները: Նա բարձրացաւ լճակի մօտ դանուող սարի գագաթը և զարմացած նայում էր այնտեղից Համուրթիւնով շինած այն ամբարտակներին, որոնց օգնութիւնով դէպի մեծ աւազանը Հոսող աղբիւրի ջուրը ջրանցքի միջով անցնում, թափվում էր լճակը և այնտեղից էլ ջրատար խողովակներով դուրս գալիս: Քիչ Ջանք չէր գործ դրած այդ բանի վրայ. և Պեօտր Իվանիչը, սրտէն գործնական մարդ, գնահատեց նրան:

— Անչափ շնորհակալ եմ քեզանից այդ բանի համար, Վանեա, ասաց նրան Հայրը փաղաքշանքով. դու՝ իսկ որ իսկ, ոտից մինչև գլուխդ տղամարդ ես եղել: Այ, եթէ մի այդպիսի Ջանք, աշխատութիւն էլ առևտրի մէջ ցոյց տայիր—աւելի լաւ կըլինէր:

Բայց Վանեայի սիրտը առևտրական գործին չէր կըպչում: Մինչև անգամ այժմ, երբ նա արդէն տասնուեօթը տարեկան էր, պարձեալ թոյլ էր իր հօրն օգնելում: Չօր Հետ յաճախ կրկնուող վիճաբանութիւնները և իր այն խոստովանութիւնը, որ ինքն առևտրական գործի Համար պէտքական չէ, տանջում էին երիտասարդ Կուլիբինի քնքոյշ սիրտը, բայց միևնոյն ժամանակ կրկնապատկում էին նրա մէջ սէր և եռանդ դէպի գիտութիւնը: Նա գրքի Համար Հոգի էր տալիս. կարդում էր ամեն բան, ինչոր ձեռքն էր ընկնում: Լոմոնոսովը նրա ամենասիրելի գրողը դարձաւ. նրա Համար այդ նշանաւոր ձկնորը ներկայացնում էր մի օրինակելի պատկեր, որի մէջ նա տեսնում էր կամքի ոյժ և սէր դէպի լուսաւորութիւնը: Եւ Կուլիբինի միակ ու նուիրական վարպետը, բաղձանքն այն եղաւ, որ ինքն էլ Հասնի այդպիսի մի կատարելութեան: Մի անգամ բոլորովին պատահմամբ, նրա ձեռքն ընկաւ «Համառօտ ձեռնարկ պարզ ու բարդ մեքենաների ուսումնասիրութեան» գիրքը: Այդ գիրքը Կուլիբինի Համար մի առանձին օգուտ ունեցաւ, որովհետև Հէնց այդ միջոցներին նա աշխատում էր ուսումնասիրել ժամացոյցի կազմակերպութիւնը—մեխանիզմը:

Ազատ օրերին նա բարձրանում էր մայր եկեղեցու գանգակատունը և, երկար ժամանակ նստած այնտեղ, դիտում էր

մեծ ժամացույցի ընթացքը, աշխատելով իմանալ սլաքների շարժուելու պատճառը: Եւ ահա բախտը բերեց, նրա ձեռքը մի այնպիսի գիրք ընկաւ, որից նա կարող էր այդ բոլորը հասկանալ: Կուլիբինը մեծ եռանդով սկսեց «ձեռնարկի» ընթերցանութիւնը, բայց գիրքը դրական լեզուով էր գրած և նա դրանից ոչինչ չհասկացաւ: Մի բախտաւոր դէպք օգնեց նրան. մի անգամ մի ինչ որ բանի համար նա մտաւ հարևաններից մէկի տունը, տեսաւ նրա մօտ պատից կախ մի վոյտեայ ժամացոյց: Կուլիբինը իր կեանքի մէջ առաջին անգամն էր տեսնում այդ բանը: Նա ուրախութիւնից դողաց և քարացած կանգնեց ժամացոյցի առաջ, աչքը չհեռացնելով նրա խորհրդաւոր սլաքներից:

— Էր՛, ինչո՞ւ ես այդպէս զարմացած մնացել, տղա, բարեսրտութիւնով նկատեց տանուտէրը. քո օրումդ ժամացոյց չե՞ս տեսել ինչ է:

— Այսպիսին չեմ տեսել. բայց դու չգիտես ինչից է սա այսպէս բանում:

— Ա՛յ թէ դու էլ բան մտածեցիր հա՛: Ես իսօ չեմ, եղբայր, պրա շինողը, որ իմանամ:

— Կարելի՞ է մի վոքր ժամանակ նայել նրա վրայ, դուցէ իմանամ:

— Տղա՛ս, թէկուզ ամբողջ տարի էլ կանգնես նրա առաջ, ոչինչ չես իմանալ, որովհետև այդ գերմանական խելքից է դուրս եկած և դժուար հասկանալու բան է: Բայց ոչինչ, քեզ մխիթարելու համար կըտամ, տար տուն և որքան ուզում ես նայիր դրա վրայ:

Իվան Կուլիբինը հազիւ հաւատալով իր բախտին, ժամացոյցը բերեց տուն և նստեց աշխատելու իր վոքրիկ սենեակում, որը զտնվում էր վերնատանը: Սկզբում նա ուշադրութիւնը լարած ժամացոյցի մասերը բաժանեց իրարից, յետոյ նորից միացրեց և այդպիսով, երբ լաւ ծանօթացաւ նրա կազմակերպութեան հետ, ինքն էլ ձեռք զարկեց հէնց նոյնիսկ դրա նման մէկը շինելու: Կուլիբինը, բացի դանակից ոչ մի գործիք չունենալով, նրանով տաշեց, կոկեց ժամացոյցի ներսի մասերը և մի-ացրեց իրար: Բայց, աւա՛ղ, ժամացոյցը չբանեց: Սակայն այս առաջին անյաջողութիւնը չթուլացրեց երիտասարդ մեքե-

նայաղէտի եռանդը: Նա ուխտեց, ինչ էլ որ լինի, հասնել իր նպատակին: Դժբախտաբար այդ միջոցին Նիժնիում ոչ մի ժամադործ չկար, որին նա կարողանար դիմել, յոյցտալու այդ բանը: Բախտն այս անգամ էլ օգնեց մեր ինքնուսին: Նիժեգօրօդի քաղաքային վարչութիւնը, մի ինչ որ գործ ունենալով Մոսկուայում, քաղաքացիներից մէկին պէտք է ուղարկէր այնտեղ, բայց որովհետև նրանց մէջ զրագէտ մարդ չճարուեց, ուստի գնալու պարտաւորութիւնը Կուլիբինի վրայ ընկաւ: Անչափ երջանիկ էր նա, որ գնում էր մի այնպիսի քաղաք, որտեղ ժամադործներ կային: Մոսկուա հասնելուն պէս, նա մտաւ հէնց ամենառաջին պատահած ժամադործի խանութը, որպէսզի հարցուփորձ անէ ժամադործին: Ժամադործը մի բարի և խելացի մարդ էր: Նա իսկոյն հասկացաւ, որ երիտասարդ Կուլիբինը կրդաւնայ ոչ թէ հասարակ ժամադործ, այլ մի հմուտ մեքենայադործ: Նա սկսեց նրան սովորեցնել: Աշկերտը վայելուն կերպով արդարացրեց իր վարպետի յոյսերը: Դեռ Մոսկուայից չհեռացած Կուլիբինն արդէն կատարելագէս գիտէր ժամացոյց շինել: Նրա հեռանալու միջոցին վարպետն իր հին գործիքները ընծայեց նրան և յաջողութիւն բարեմաղթեց: Երիտասարդը տուն վերադառնալով, մեծ հոգացողութիւնով նորոգեց կատարտուած գործիքները և սկսեց փայտէ ժամացոյցներ շինել, ղլիսներին էլ կլուներ նատեցնելով: Այս անգամ նրա աշխատանքները պսակուեցան կատարեալ յաջողութիւնով. ժամացոյցը բանում էր, կլուն ձայն էր հանում, զարմացնելով բոլոր քաղաքացիներին, որոնք չէին տեսել մի այդպիսի հրաշք: Կուլիբինը էլի մի քանի հատ այդ տեսակ ժամացոյցներ շինեց և յաւ գնեցով ծախեց նրանց, ձեռք բերած փողերով նա տուաւ իր համար նոր գործիքներ, մի քանի հատ անհրաժեշտ գրքեր, հին, վէսյատ ծոցի ժամացոյցներ և նստեց նորից աշխատելու:

III

1764 թուին, ամառնային մի պայծառ երեկոյ, Ասպէնակու եկեղեցու յետևը, վրատակի ծայրին, խոտերի վրայ երկու մարդ էին նստած. նրանք զուարճանում էին իրանց առաջ բացուող հրաշալի տեսարանով և բարեկամարար խօսակցում էին իրար հետ: Խօսակիցներից մէկը դեռ երիտասարդ էր, մօտ 29 տարեկան, միջահասակ, պնդակազմ, կոլոր և վարդագոյն դէմքով: Իսկ միւսը — արդէն տարիքն անցած, ալեխառն մազերով մի մարդ էր: Առաջինն Իվան Կուլիբինն էր, իսկ երկրորդը — նրա մօտ ծանօթ վաճառական Միխայիլ Անդրէեվիչ Կօստրօմինը: Նրանք հանդիպեցին միմեանց երկարատև անջատումից յետոյ և Միխայիլ Անդրէեվիչը, որը ջերմ կերպով սիրում էր Կուլիբինին, շատ էր հետաքրքրւում երիտասարդ ինքնուսի վիճակով:

— Պատմիր ինձ մանրամասնօրէն, Իվան Պետրովիչ, թէ ինչպէս էիր ապրում դու այդքան ժամանակ և ինչ էիր շինում, — հարցնում էր նա Կուլիբինին:

— Ամեն կերպ ապրում էի, Միխայիլ Անդրէեվիչ, պատասխանում էր նա. լաւ էլ, վատ էլ, բայց, եթէ հաշուեմ քաշածս ու օրերի թիւը, կարծեմ, որ աւելի կը լինի: Ակղրներում ես պատուէրներ շատ ունէի, այնպէս որ ընտանիքս ոչնչի կարօտութիւն չէր քաշում. բայց ինչ արած, որ ժամանակ չէի ունենում իմ կրթութիւնով էլ պարապելու: Այս ինչ է, մտածում էի ես, կեանքումս հէնց միայն վայրէ ժամացոյցներ պէտք է շինեմ ու դլխներին էլ կկուներ նստեցնեմ. էլ տառջ չեմ գնալու ինչ է: Ես մտածելով այն մտքի եկայ, որ ինձ համար երկրաւոր ամեն բարիքներից գերութիւնն աւելի թանկագին է, որ նա թանկ է նաև իմ սիրելի ընտանիքից: Սկսեցի ես մերժել կողմնակի գործերը, ինձ նուիրեցի մեքենայագործութեան, ազատում էի շինել մետաղեայ ժամացոյցներ, և այլն: Սկզբում մենք մի կերպ եօլայ էինք գնում, բայց շատով ընտանիքիս վիճակուեցաւ կրել ամենապատուն զրկանքներ. կինս շատ աշխատելուց ուժից ըն-

կաւ և բացի այդ, ծախքերս էլ քիչ չէին. երկու որդի ունէի, քոյրս ու եղբայրս էին, երկուսն էլ որբեր, իսկ Հայրական 700 ռ. պարտքն էլ իս մի կողմից էր ինձ խեղդում: Խեղճ կնոջս Համբերութիւնը հատաւ. սկսեց ինձ պախարակել. երբեմն էլ մօտենում ու ասում էր. «Ախր խղճայ ընտանիքիդ, Իվան Պետրովիչ, մի՛թէ այդ ատելի գրքերը քեզ համար որդկերանցիցդ ու կնոջիցդ էլ աւելի թանկագին են:»

Գառն անցեալի յիշողութիւնը ալեկոծեց Կուլբինին. նա վերջաւ տեղից և երեսը ձեռքերով ծածկեց:

—Բայց ինչ կարող էի ես պատասխանել նրան: Չէ՞ որ նա իմ ասածը չէր հասկանալ: Համբերվիր, սիրելիս, ասում էի, մի փոքր էլ համբերվիր, եթէ ինձ սիրում ես: Իսկ ինքս լալիս էի: Գառն օրեր շատ քաշեցի, Միխայիլ Անդրէեվիչ. ընտանիքս մի կտոր հացից զրկելու համար, ինքս քաղցած էի մնում, բայց դարձեալ չվհատուեցայ, փողին չերկրպագեցի: Երբեմն չէի համարձակվում փողոցներում երևալ, որպէսզի դրացիներիս չհանդիպեմ և նրանցից խորհուրդներ չլսեմ· ապա թէ ոչ ամեն անդամ պատահում էի միօրէն բարեկամի, որը խոկոյն աչք կըզդեր դղդաճ շրթերիս, գլուխը կըշարժէր և կասէր. «Է՜հ, եղբայր Իվան, դու փոխանակ ժամացոյցների ետևից ընկնելու, լաւ կանէիր, որ այլուր ծախէիր: Այդ էլ մի պարապմունք է: Դրա համար կան դերմանացիք, այդպիսի զործով պարապել — այդ մեր մեծամօրուքների խելքի բանը չէ»: Բայց ես, Միխայիլ Անդրէեվիչ, շարունակում էի իմ զործը և ժամագործական արհեստում այնպիսի կատարելութեան հասայ, որ էլ սովորելու աչինչ չկար: Այժմանակ դարձեալ սկսեցի պատուէրներ ընդունել: Ջուտով այնքան զործեր հաւաքուեցան, որ էլ միայնակ չկարողացայ գլուխ տանել և աշկերտ ճարեցի: Այժմ ամբողջ նիժնին՝ սկսած նահանգապետից մինչև փողոցի վերջին երեխան էլ ճանաչում է ինձ, որովհետև քաղաքում միակ ժամագործը ես եմ: Առաջուայ նեղութիւնները այժմ մոռքովս էլ չեն անցնում. միայն... միայն մտածեցի ես, Միխայիլ Անդրէեվիչ, դեռ չտեսնուած ժամացոյց շինել. բոլոր ձևերն ու նկարները արդէն պատրաստ են, միայն զործին

ձեռք զարկել չեմ կարողանում, որովհետև այդ բանը բաւականին թանկ կընստի և շատ էլ ժամանակ է պահանջում. մնում է դարձեալ պատուէրներով գլուխ բերել:

—Ցոյց տուր ինձ քո նկարները:

Կուլիբինը գնաց տուն, որը շատ մօտ էր գտնւում նրանց խօսակցութեան տեղից, և բերեց իր բոլոր նկարները: Նա սկսեց այդ ամենը ցոյց տալ իր բարեկամ ու պաշտպանին: Կօտրօմինը, իր ժամանակին համեմատ, զարգացած մարդ էր. նա Կուլիբինի տուած բացատրութիւնից հասկացաւ, որ նրա նորագիւտ ժամացոյցը դատարկ ցնորք չէ:

Հիմա լսիր, ինչ եմ ասում քեզ, Իվան Պետրովիչ, ասաց նա թղթերը փաթաթելով. եթէ դու ուզում ես իմ բարեկամը լինել, ապա առանց խօսելու ընդունիր հետևեալ պայմանները. հէնց վաղուանից՝ էլ ոչ մի պատուէր մի վերցնիլ և սկսիր դու քո ժամացոյցը շինել. մինչեւի բոլորովին կրվերջացնես նրան, ծախքերիդ փոխն ինձնից առ. իմ հաշուով գնիր նոյնպէս գրքեր, դործիքներ, նիւթեր, և այլն: Ընտանիքիդ և աշկերտիդ, որքան կարելի է, լաւ պահիր. ժլատութիւն չանես:

— Միխայիլ Անդրէեվիչ... գոչեց Կուլիբինը. բայց Կօտրօմինը հէնց առաջին խօսքի վրայ կանդնեցրեց նրան:

— Քեզ եմ հարցնում, Իվան Պետրովիչ, եթէ որ դու էլ ինձ պէս հարուստ լինէիր, մի՞թէ երբէք ոչ ոքի չէիր օգնիլ. դու, մի օրհնուած սիրտ ունես: Ես գիտեմ, որ դու այժմ էլ չես հրաժարվում քո մերձաւորներին օգնելուց:

Կուլիբինը փոխանակ պատասխանելու, գլխարկը գլխից դէն շպրտեց և՝ արտասուքն աչքերին, բռնելով Կօտրօմինի ձեռքերից, ամուր սեղմում էր նրանց:

— Ամբողջ կեանքիս մէջ ես անկարող կլինիմ իմ շնորհակալութիւնը յայտնելու քեզ քո բարեգործութեան համար, ով դու բարի և ազնիւ բարեացակամ, շշնջում էր նա ալեկոծուած. այո, ամբողջ կեանքիս մէջ:

IV

Պետերբուրգի Գիտութեանց Ակադեմիան մօտ գտնուող մի փոքրիկ և համեստ սենեակում սեղանի առաջ նստած՝ Կուլիբինը նամակ էր գրում Նիժնի իր նախկին աշխատակից Պետրիկովի վրայ.

«Սիրելի Իվան Իվանիչ.

Ահա արդէն երկու օր է անցել այն օրից, որ ես Պետերբուրգից ճանապարհ դրի իմ բարեկամ և պաշտպան Միխայիլ Անդրէեվիչին. տախտակութիւնը ինձ սպասում է: Ես ինձ զգում եմ բոլորովին միայնակ, դէն ձգած, այս մայրաքաղաքում, Ակադեմիայի գիտնական անձինքների խուռն բազմութեան մէջ: Կատարելով քո խնդիրքը, ես մանրամասնօրէն կրպատմեմ քեզ, սիրելիս, այն բոլորը, ինչ որ մինչև այսօր պատահել է ինձ: Փետրուարի 27-ին, Միխայիլ Անդրէեվիչի հետ ճանապարհ ընկայ դէպի Պետերբուրգ: Ճիշ, որպիսի հրճուանքով էի նայում ես այդ մեծաշուք քաղաքին: Որքա՜ն հետաքրքրում էին ինձ նրա հոյակապ շինութիւնները, պալատները, մահարձանները, և այլն: Ինձ թուում էր թէ մի օտարօտի երազի մէջ եմ. աչքերս շփում էի, բայց ո՛չ. վերջապէս իմ բոլոր երևակայական ցնորքները իրագործուեցան. ես Պետերբուրգումն եմ: Առաջին օրերը ես շանթահարի նման վազվզում էի քաղաքի մէջ և ամեն բան դիտում, զննում. իսկ այդ միջոցին իմ բարեկամ Միխայիլ Անդրէեվիչը հոգս էր քաշում ինձ համար: Նա մի կերպ իրաւունք ստացաւ ներկայանալու Գիտութեանց Ակադեմիայի տեսուչ՝ կոմս Օրլովին և հրամայելով, որ իմ բոլոր աշխատութիւնները հետս առնեմ, ինձ էլ տարաւ իր հետ: Գնացինք: Ճանապարհին շարունակ այն էի մտածում՝ թէ ինչպէս կընդունի ինձ կոմսը: Թէպէտ նա 1767 թ. կայսրուհու հետ Նիժնի եկած ժամանակը տեսաւ ինձ և շատ էլ ողորմած դտնուեցաւ դէպի ինձ, բայց այն օրից երկու տարի էլ անցել: Նա, երևի բոլորովին մոռացաւ էլ՝ թէ ես ապրում եմ, և վերջապէս ինչ մի մտքում պահելու զաւս եմ ես, ես — մի գիւղացի ինքնուս: Այդ մտածմունքներն ինձնից չէին հեռանում մինչև անգամ այնժամանակ, երբ մենք՝

ես ու Միխայիլ Անդրէեվիչը, կանգնած կոմսի ընդունարանում, նրա դուրս գալուն էինք սպասում: Բայց երևակայիր քեզ իմ զարմանքը, երբ այդ հպարտ ազնուականը, տեսնելով ինձ, արագ քայլելով առաջ եկաւ և, դգուանքով ձեռքը մեկնելով դէպի ինձ, ասաց. «Խալուստդ բարի, Իվան Պետրովիչ, այս ո՞ւր ես, ինչո՞ւ այդպէս ուշ ես գալիս Պետերբուրգ. շուտով ցոյց տուր տեսնեմ այսքան ժամանակում ինչեր ես շինել. թէ որ շատ են խօ կբներեմ քեզ՝ ուշանալուդ համար»: Յետոյ նա նոյնպիսի սիրալիր խօսքերով դարձաւ դէպի Միխայիլ Անդրէեվիչը: Կոմսը չափազանց բաւական մնաց՝ նայելով իմ աշխատութիւններին և արձակելով ինձ, ասաց. «Դու պէտք է ներկայանաս կայսրուհուն և անձամբ ներկայացնես նորին մեծութեանը քո աշխատութիւնները: Ես կը յայտնեմ ձեզ թէ երբ կաթելի կըլինի պալատը գալ»: Սակայն մենք մինչեւի Ապրիլի 1-ը սպասեցինք: Ես երբէք չեմ մոռանալ այդ ինձ համար արժանալիշատակ օրը: Դու գիտես որ ես ոչ մի ժամանակ վախկոտ չեմ եղել, բայց երբ Միխայիլ Անդրէեվիչը յայտնեց թէ պէտք է պատրաստուել պալատը գնալու,— ինքս էլ չգիտեմ թէ ինչ պատահեցաւ ինձ. դողում էի, ամեն բան ձեռքիցս վայր էր ընկնում: Միխայիլ Անդրէեվիչը նկատեց այդ և ասաց. «Ի՞նչից ես վախենում. խօ մի անգամ նիժնիում ներկայացել ես կայսրուհուն»: «Ես ոչինչից չեմ վախենում, Միխայիլ Անդրէեվիչ, միայն ինքս էլ չգիտեմ թէ ինչ է պատահել ինձ»: Այդ բարեհոգին սկսեց ինձ օգնել պատրաստուելում, որովհետև տեսնում էր, որ իմ պատրաստուիլը վերջ չունի: Դուրս գալիս քիչ էր մնում ժամացոյցը տանն էլ թողնում, որը նշանակուած էր կայսրուհուն մատուցանելու: Այդ բանը նրան սաստիկ զայրացրեց: «Պանո՞ւկ ես ինչ է, որ ես միշտ պէտք է դայեակի պէս քո յետևից մանգամ. հապա էլ ինչպէս պէտք է դու առանց ինձ ապրես այստեղ», զոռաց նա: «Գիտեմ», պատասխանեցի ես—բայց, երևի, այդ րոպէին շատ ծաղրելի էի, որովհետև Միխայիլ Անդրէեվիչը քրքրաց և ձեռքով արաւ: Սիրելի բարեկամ, ես չեմ սկսել նկարագրել քեզ, թէ որպիսի ճոխութիւններ տեսայ պալատում, միայն այսքանս կասեմ, որ մինչեւի մենք գահլիճ-

ներից մեկում սպասում էինք կայսրուհուն, ես ուրախությունով զգում էի, որ իմ երկիւղն ու յուզմունքն անցնում են: Եւ այն րոպէին, երբ կայսրուհին Օրլովի և Պոտեմկինի հետ դահլիճ մտաւ, ես բոլորովին հանդարտ էի: «Ձատ ուրախ եմ ձեզ տեսնելով, Իվան Պետրովիչ, ողորմածաբար դարձաւ դէպի ինձ կայսրուհին. արդիօք վերջացրե՞լ էք դուք ձեր նշանաւոր ժամացոյցը»: Ես ժամացոյցը տուի նրան: Նա ուշադրութիւնով զննում էր նրան և մեծ քաւականութիւնով լսում նրա նուագած երաժշտութիւնը: Յետոյ կայսրուհին նայեց իմ շինած ելեքտրական մեքենային, խոշորացոյցին, հեռադիտակին և ասաց. «Այո, ելեքտրական մեքենան առաջին անգամն է, որ շինւում է Ռուսաստանում և ես պարծենում եմ նրանով, որ նրա շինողը ռուս է»: Այնուհետև կայսրուհին երկար խօսում էր ինձ հետ իմ դէպի մեխանիկան և առհասարակ դէպի գիտութիւնն ունեցած սիրոյս մասին: Ես բոլորովին ուշքի եկայ և համարձակ սլատասխանում էի նորին մեծութեան բոլոր հարցերին: Կայսրուհին դարձաւ դէպի Կոստրոմինը և ասաց. «Ձնորհակալ եմ ձեղանից, պ. Կոստրոմին, ձեր դէպի Կուլիբինը ցոյց տուած անկեղծ կարեկցութեան համար: Ես այդ չեմ մոռանալ»: Այստեղ արդէն ես չկարողացայ ինձ զսպել և յուզուած սկսեցի շշնջել. «Ա՜խ, դու, իմ նանիկ, իմ կարմիր արև»: Կայսրուհին իր հրաշալի աչքերով սիրալիր կերպով նայեցաւ ինձ վրայ և ասաց. «Դուք վաղը կխմանաք իմ կոմքը». յետոյ խնդոյն հեռացաւ: Չէնց հետևեալ օրը բարձրագոյն հրամանն դուրս եկաւ—իմ ժամացոյցը, ելեքտրական մեքենան, խոշորացոյցը և հեռադիտակը դնել թանգարան և պահպանել. ինձ տարեկան 300 մ. ռոճկով մեխանիկի պաշտօն տալ Պետերբուրգի ճեմարանում. իմ լրատուութեան տակ դնել ճեմարանի մօտ գտնուող մեխանիկական արհեստանոցը. ժամացոյցի համար տալ ինձ 1000 մնթ. մի այդչափ դումար էլ նուիրել Միխայիլ Անդրէեվիչին, «նրա անկեղծ և բարեսիրտ օգնութեան համար, որ նա ցոյց տուեց Կուլիբինի ձիրքերին»—ինչպէս որ թղթում ասուած էր: Բացի այդ Միխայիլ Անդրէեվիչին նորին մեծութեան առանձնասենեակից նուիրեցին մի թանկագին, զարդարեալ բաժակ կայսրու-

հաւ ոսկեզօծ սլատկերով, շուրջը վիմագրած։ Այո, կայսրուհին նուրբ՝ և զգայուն սրտով գուշակեց, որ իր կողմից իմ բարեկամին արած ողորմածութիւնը և ինձ համար մեծ պարգև կըլինի։ Էլ ինչ ասեմ իմ մասին, վաղեմի ընկեր, աշխատում եմ որքան կարելի է շատ և եռանդով։ Բայց իմ գրութիւնն այս գոռոզ ճեմարանականների մէջ բաւականին անախորժ է. միայն աշխատանքին ոյժ տալով՝ խեղդում եմ իմ մէջ այն վիշտը, որ նրանք պատճառում են ինձ՝ աղքատ ինքնուսիս, իրանց զղուելի վարմունքներով ու կատակներով։ Մինչև այժմ, բարեկամ, ես այնպէս էի մտածում, թէ մարդ որքան աւելի զարգացած լինի, այնքան նա աւելի աղնիւ ու քաղաքավարի կըլինի, բայց ոչ. այժմ տեսնում եմ, որ մարդու միայն ուղեղը չափաւոր է զարգացնել, այլև սիրտը։ Դէհ, բաւական է, մնացածը միւս նամակով. սա առանց այն էլ երկարեց։ Նամակ գրիր։

Իվ. Կուլիբին.»

V

Ճեմարանի ընդարձակ դահլիճներից մէկում հաւաքուել էին բոլոր պրօֆեսորները։ Այդ պատահական անձինքներից մէկի առաջ դրուած էր մի բաւականին մեծադիր տետրակ. նա տետրակի թերթերը դարձնելով, նկատելի դայլայլով, ասաց.

—Շափազանց մեծ պատիւ կըլինի այդ նիժեգօրօդի հիւանի համար, որ Պետերբուրգանց ճեմարանի անդամները հաւատան նրա ցնորքներին, որոնց նա չանդգնում է մաթեմատիքական հաշիւներ անուանել։ Հա, հա, հա... մաթեմատիքական հաշիւները ռուս գիւղացու ճեռքով գրած, որը ոչ մի տեղ չէ ուսել. այո, բաւականին ծիծաղելի է։

—Ես զարմանում եմ, որ կայսրուհին ուշադրութիւն է դարձնում այդպիսի մեծամօրուսի վրայ, արհամարանքով նկատեց միւսը. նա ամենաստոր վարպետներից մէկն է։

—Պարոններ, ուշքի եկէք թէ ինչ էք ասում, —յուզմունքի մէջ բորբոքուած գոչեց պրօֆեսոր Էյլերը, բազմոցից վեր թռչելով։—Վայելչ է արդեօք դիտութեան ներ-

կայացուցիչներին այդպէս խօսել բացակայ եղող մարդու մասին։ Եւ ահա վրայ հաք դուք այդպէս խօսում. նրա վրայ, որ եօթը տարուայ ընթացքում մենմենակ աշխատում է ամբողջ ճեմարանի տեղ։ Պարոննե՛ր, խղճմտանքով ասացէք. ինչ ենք շինել մենք այս եօթը տարում. ոչինչ. այն ինչ աստիճաննե՛ր, պարգևնե՛ր, մեծամեծ ձախքերի համար փողե՛ր—այդ բոլորը մենք ստացել ենք։ Իսկ նա ապրում է մի փոքրիկ, աղքատիկ բնակարանում և այն բոլոր փողերը, որ տալիս են նրան կայսրուհին կամ Պօտեմկինը, նա դործ է ածում իր գիտնական վորձերի համար։ Տեսէք թէ այդ «Հիւսնը» մեր մեխանիքական արհեստանոցն ինչ դարձրեց. առաջ նորանում չէին կարողանում կոտրատուած դործիքները նորոգել, այն ինչ այժմ ահագին քանակութիւնով նորերն են շինում ոչպէս ռազմական տեղերի համար, նոյնպէս և մասնաւոր պատուէրներով։ Այն նաւերն, որոնք կայսրուհու հրամանով ուղարկուած են երկրի շուրջը պտրտելու, բոլորն էլ ապահովուած են կարևոր մաթեմատիքական և ուրիշ դործիքներով, որոնց շինել են այդ «Հասարակ վարպետի» ձեռքերը։ Զմայլուեցէ՛ք նրա նոր աղեղնաձև կամուրջի մօդելի վրայ, որը դրուած է ճեմարանի բազում։ Չէ՞ որ այդ մի կատարելութիւնից վեր բան է։ Օ՛, պարոննե՛ր, մենք բոլորս էլ շատ ու շատ ենք սովորել, բայց ոչ մեզանից դրա նման մի բան հնարեց։ Եւ եթէ Ռուսաստանում «մօրուսաւոր Հիւսները», «հասարակ վարպետները» այդպիսի բաներ են հնարում, ապա ինչ կըլինի այնժամանակ, երբ այդ երկրում կըլայսոնուին երևելի մեխանիկներ։

Ճեմարանականները վեր թռան իրանց բադկաթռուներից և նրանցից մէկը տետրակը շպրտելով դէպի էյլերը, համարեա աղաղակեց.

—Երբ որ այդպէս է, դուք լինքներդ ստուգեցէք ձեր «երևելի մեխանիկի» մաթեմատիքական հաշիւները. մենք հրաժարվում ենք։

—Շատ բարի,—հանդարտ կերպով պատասխանեց էյլերը. ես սրտանց կըցանկայի, որ էլ ստիպուած չըլինիմ նրան ուղղելու։

Ճեմարանականները կատաղած հեռացան։ Իսկ էյլերը Վուլիբինի մաթեմատիքական հաշիւները տարաւ տուն և

միքանի օրից յետոյ ամբողջ ժողովում յայտնեց, որ ամեն բան կատարելապէս ուղիղ գտաւ։ 1776 թ. դեկտեմբերի 27-ին նշանակուած էր Կուլիբինի մօդելի փորձը։ Պրանից քիչ առաջ ճեմարանականներն օտարադգի մեխանիկների երկու հէնց դրա նման մօդելներ վարձեցին, բայց երկուսն էլ անյաջող անցաւ։ Նրանք լիովին համոզուած լինելով, որ դրանից էլ մի բան չի դուրս գալու, ծաղրածութիւններով սկսեցին վորձը։ Ճեմարանի վերատեսուչ կոմս Օրլովի և Պօտեմկինի ներկայութիւնն անդամ չէր կարողանում զսպել ճեմարանականների դէպի Կուլիբինն ունեցած զարոյքի զգացմունքը։

— Մենք արդէն երկու կամուրջի վրայ մահ եկանք, — ասաց մէկը, սկսենք երրորդի վրայ էլ մահ գալ։

— Չուտով Կուլիբինը մեզ համար երկինք բարձրանալու սանդուղք էլ կըշինի—քրքրալով նկատեց մի ուրիշը։

Կուլիբինն իր լայն և երկար մօրուսով, ռուսական երկայն բաճկոնը հագած, հանգիստ ու անխռով կանգնած էր նրանց առաջ։ Նա, կարծես, այդ ծաղրածութիւնները չէր լսում։ Մօդելը ներկայացնում էր մի զեղեցիկ կամուրջ, 14 սաժէն երկայնութիւնով, և հաշուով պէտք է 2,970 փութ ծանրութիւն բարձրացնէր։ Ահա հասաւ րոպէն, երբ որոշուած ծանրութիւնն արդէն դրուեցաւ մօդելի վրայ, բայց նա անշարժ մնաց։ Ծաղրողների երեսները սևացան։

— Մնացած երկաթն ու աղիւսն էլ դարսեցէք։ — ասաց Կուլիբինը բանուորներին։

Մօդելի վրայ դրուած էր 3,540 փութ և նա տեղից չէր շարժվում։ Այդժամանակ Կուլիբինը բարձրացաւ կամուրջի վրայ, կոնդնեց նրա մէջտեղն ու բոլոր ճեմարանականներին հրաւիրեց իր մօտ։ Նրանք երեսները թթխմորուած անցան կամուրջը։ Էլլերն առաջինն եղաւ, որ դարձաւ դէպի Կուլիբինը, մեծարանքով սեղմելով նրա ձեռքն ու ասաց.

— Սրտանց շնորհաւորում եմ ձեզ, ձեր յաջողութեան համար, պ. Կուլիբին։ Այժմ ձեզ մնում է միայն կատարել իմ պատուելի ընկերոջ մարդարէութիւնը և մեզ համար երկինք բարձրանալու մի սանդուղք շինել։

Պայծառասիրտ իշխան Պօտեմկինը նոյնպէս սեղմեց Կուլիբինի ձեռքը և ասաց.

— Յոյս ունիմ շուտով շնորհաւորելու ձեզ կայսերական նոր ողորմածութիւնով։

Կայսրուհին հրամայեց 2,000 մ. նուիրել Կուլիբինին։ Մինչև այժմ նորին մեծութիւնը նրան փողով էր վարձատրում, բայց այժմ հրամայեց, որ Կուլիբինի ամբողջ ընտանիքն ազատ են գլխահարկ տալուց։ Ի՞նչով կարող էր էլի վարձատրել նրան — կայսրուհին դժուարանում էր, որովհետև այդ ժամանակ մօրուսը և ռուսական հանդերձը համարվում էին տիմարութեան նշաններ և ատելութեան ու մեծարանքներ ստանալուն արգելք էին դրնում։ Կոմս Օրլովը, չափազանց սէր և յարգանք ունենալով դէպի Կուլիբինը, համոզում էր նրան մօրուսը վեր տնել և դերմանական շոր հագնել։ Բայց նա այսպիսի պատասխան էր տանում։

— Ձերդ պայծառափայլութիւն, ես ռուսական շորը համարում եմ ամենաթեթև և ամենայարմար շոր։ Ես ոչ ընկնում եմ վառքի ու պատուի չեւելից և ոչ էլ նրանց համար մօրուսը վեր կանեմ։

Այս պատասխանը հաղորդուեցաւ կայսրուհուն։ Այդ ժամանակ նա մտածեց մի առանձին պարգև տալ իր սիրելուն։ 1778 թ. մայիսի 5-ին Կուլիբինին պատուիրած էր Յարսկի-Սելօն երթալ. այստեղ կայսրուհին, պայծառափայլ պալատականների ներկայութիւնով, իր ցատուկ ձեռքով մի մեծ ոսկէ շքանշան, Անդրէեվ ժապաւէնով կապած, կախեց նրա վզից և հետն էլ ասաց.

— Ես միշտ յարգել եմ ձեզ, պարոն Կուլիբին, ձեր օգտաւէտ աշխատութիւնների համար։ Բայց աւելի եմ յարգում ձեղ՝ ձեր դէպի նախահայրերի սովորութիւններն ունեցած պատուի ու մեծարանքի համար։ Հաւատացէք ինձ, որ դուք չնայելով մօրուս էք պահում, այսուամենայնիւ ես ձեզ, վոխանակ տիտղոսների և աստիճանների, կրկնակի վարձատրեմ վայելուչ պարգևներով։

Կուլիբինին շնորհած շքանշանը հազուագիւտ պարգև էր և նրա ստացողը դնալ դալ էր ունենում արքունիքում, որտեղ նա կանգնում էր բարձր աստիճանաւորների կարգում։

VI

Նիժեգորոդի տոնավաճառում, Մոդնի-Լինիայի խանութներից մեկի մոտ, ճղոտեայ բազմոցի վրայ նստած էր Կոստրոմինը և զրույց էր անում խանութպանի հետ, որը մի հատիկ և պատուական վաճառական էր։

—Արդէն բաւական ժամանակ է, որ դուք էլ մեր տոնավաճառը չէք այցելում, Մելեալիլ Անդրէեվիչ,—ասում էր նա։

— Այո տալի էլ ես հաւատարմատալիս կուզարկէի, եթէ որ կարևոր գործերը չլինէին, որոնք պահանջում են ինձ անձամբ ներկայ գտնուիլ Նիժնիում։ Հէնց դրա համար էլ շտապեցի ես տոնավաճառից առաջ ճանապարհ ընկնել մայրաքաղաքից։

—Ուրեմն դուք Պետերբուրգից էք գալիս։ Ոչինչ տեղեկութիւն չունէք արդեօք մեր երկրացի Կուլիբինի մասին։

—Ինչպէս չէ – ուրախացած գոչեց Կոստրոմինը։ Չէ՞ որ մենք ամենամօտ բարեկամներ ենք իրար հետ։ Պետերբուրգ գնալիս ես միշտ նրա տանն եմ լինում։ Ձեր Կուլիբինը հետզհետէ բարձրանում է, Վասիլի Վասիլիչ. նորերումս Ազատ Տնտեսական Ընկերութեան անդամ ընտրուեցաւ։ Իսկ կայսրուհին նրա ուռճիկը հասցրեց մինչև 1,200 մանէթի։ Ես ճշմարիտ որ արժէ այդ մարդուն քաջալերել։ Նա այնքան օգտաւէտ գործեր է սրել, որ լեզուով չեմ կարող ասել։ Ես կրպամեմ ձեզ նրա միքանի գիւտերի մասին միայն։ Ես Կուլիբինի սիստեմային մի լաստեր ունեմ, որի լոյսը 30 վերստ հեռաւորութեան վրայ երեւում է։ Ներկայումս նրա լաստերներն են գործածվում փարոսների նաւերի վրայ, և այլն։ Պետերբուրգի ապակէձուլ գործարանում հալած ապակին մեկ տեղից միւս տեղ փոխադրելու համար նա նոր մեքենաներ շինեց, որով կարողութիւն տուաւ այնպիսի մեծութեան ապակիներ ձուլելու, որոնց մասին առաջ մտածել անգամ չէին կարող։

— Օհո, քաջդ դուս Կուլիբին – կոչեց վաճառականը հիացած։

—Ճշմարիտ որ բանի մէջ նա քաջ է,—հաստատեց Կոստրոմինը։—Սակայն ես նրա միայն մեկ բանին չեմ հաւան, այն է՝ ռուսական անտաշութեանը։ Ես նրան միշտ

ասում եմ, որ նա իր այդ սովորութիւնովը շատ բան է կորցնում, բայց նա, իմ տուած խրատների ժամանակ, ամենաանտարբեր հայեացքներով նայում է վրաս և քթի տակ ծիծաղում։ «Ինձ համար, Միխայիլ Անդրէեվիչ, միևնոյն է, ասում է նա. մէկը—ես թէ ուրիշը, եթէ մի օգտակար գործ է կատարում, բաւական է որ այդ գործը նա կատարած լինի»։ Ինքներդ դատեցէք. նա մի ինքնաշարժ սայլակ շինեց, որի մէջ ազատ երկու մարդ կարող էր նստել, և փոխանակ իր այդ նոր գիւտը շուտով ճեմարանին ներկայացնելու և մի առանձնաշնորհութիւն ստանալու, մեկնակ նստած իր «ինքնաշարժ» սայլակում ամբողջ Պետերբուրգը շրջում էր և ժողովուրդին զարմացնում. այն ինչ հէնց այդ միջոցին յայտարարուեց, որ Ֆրանսիայում էլ յայտնուել են դրա նման ինքնաշարժ սայլակները։ Կուլիբինը յետ կանգնեց. նա այդ գիւտի փառքը ուրիշ մեխանիկից խլել անդամ չուզեց։ Ես վախենում եմ թէ դարձեալ նոյնը պատահի նրա և վերջին գիւտի հետ. դա մի արհեստական ոտն է, որը շինեց նա անյատ աստիճանաւորի համար։

—Չը՛մ, տեսէք թէ մինչեւ ուր է հասել նա, զարմացաւ վաճառականը։ Բայց լաւ շինեց նա այդ ոտը։

— Այնքան դեղեցիկ, եղբայր—ասաց ոգևորուած կօստրօմինը, որ ճանաչել անդամ չի կարելի. նա ծալվում և բացվում է ինչպէս բնական ոտը։ Բայց ամենից աւելի նա աշխատեց ինքնագնաց նաւը շինելու վրայ։ Նա տեսաւ Վօլգայի վրայ չարչարուող անբախտ և իրան նպատակ ընտրեց թեթևացնել նրանց այդ ծանր աշխատանքները։ Ինձ պատմում էին թէ «ինքնագնաց նաւի» փորձի օրը Պետերբուրգում մեծ տօնախմբութիւն եղաւ։ Ժողովուրդի խուռն բազմութիւնը ծածկել էր Նեվայի ափունքը։ Երբ չորս հարիւր վուժ ծանրութիւնով բեռնաւորուած նաւը, առանց թիակի և առագաստների, ամենազօրեղ քամու հակառակ ճչեց ջուրն անցկացաւ, սաստկաձայն «կեցցէ»-ներով ղրղռացրին օդը—ողջունեցին Կուլիբինին։ Կայսրուհին պալատի պատուհանից նայում էր ու թաշկինակը շարժում։ Նա հրամայեց 5,000 մ. նուիրել Իվան Պետրօվիչին և նաև էլ շուտով յարմարեցնել Վօլժիան նաւա-

գնացուքեանը: Բայց Կուլիբինը խնդրեց փոքը ինչ սպասել, ասելով որ մեքենայում դեռ կատարելագործելու բան կայ: Որքան էլ ես նրան համոզում էի, որ նա թոյլ տայ նաւին ընթացք տալու հէնց այնպէս, ինչպէս որ նա կայ, բայց նա ինձ չէր լսում և իրանն էր պնդում, թէ պէտք է դեռ նրան կատարելագործել: Ես հէնց այն էի սպասում, թէ ահա որտեղ որ է կըյայտնուին այդ նաւի նման նաւեր և դարձեալ այդ գիւտի փառքն էլ կըխլուի Կուլիբինից. մանաւանդ որ այդ շատ հեշտ էր, որովհետև ճեմարանում նա շատ քիչ բարեկամներ ունէր: Որքան էլ նրա ջերմ ցանկութիւնն էր միշտ, ինչքան կարելի է, աւելի օգուտ բերել իր Հայրենիքին, բայց չէր կարողանում ազատ աշխատել, ճեմարանականները նրա ամեն մի գործին խափանարար էին լինում:

—Բայց ասացէք ինձ, Միխայիլ Անդրէեվիչ, հարմա՞ստ է Կուլիբինը: Աստ՞ են, կայսրուհին նրան մեծամեծ նուիրատուութիւններ է անում:

—Ի՞նչ, ինչո՞ր էք հնարում, եղբայր, գոչեց Կոստրոմինը. նա միշտ պարտքերի մէջ է և նրա տեղ այդ պարտքերը երբեմն կայսրուհին է վճարում, երբեմն Պոտեմկինը և երբեմն էլ Օրլովը: Ամբողջ Պետերբուրգին յայտնի է նրա վարած օրինակելի կեանքը. գինի ամենևին չէ խըմում, թուղթ չէ խաղում և ապրում է իր ընտանիքի հետ, որքան կարելի է, համեստ: Բայց նա պարտքեր է անում, որովհետև փորձեր անելու, մօդելներ կազմելու համար շատ փող է գնում: Վերջին անգամ մայրաքաղաք գնալիս ես տեսայ նրան: Նա գործեր շատ ունէր և այդ բոլորը կատարում էր ազատ վարձկան բանուորների օգնութիւնով: Բանուորները նրան անչափ սիրում են, որովհետև նա բոլորին էլ իրան հաւասար է համարում և նրանց հետ վերաբերվում է ինչպէս իւր օգնականների հետ. նրանց ամեն կարիքները հոգում է: Երբեմն նա մէկին, առանց նրա ուզելու, առաջուց տալիս է փողը, երևելի գիտենալով, որ նա կարօտութեան մէջ է: «Դեռ ժամանակ չէ լրացել, Իվան Պետրովիչ», ասում է բանուորը: «Այդ մի մեծ ցաւ չէ, պատասխանում է նա հանդարտ կերպով, կըծառայես. դեռ գործեր շատ կան»:

Որքան բարութիւնները է անում նա թէ փողով, թէ խորհրդով և թէ իր անուան ազդեցութիւնով։ Մարդ չեմ գտնիլ, որ նրան դիմած ու առանց օգնութեան յետ դարձած լինի։ Պատահում է, որ նա կայսրուհուն է դիմում, երբ հարկաւոր է մէկի համար մի բան խնդրել։ Ֆլտճ, Վասիլի Վասիլիչ, հոգիս վառաւորվում է, երբ մտածում եմ, որ ես այդ մարդու մէջ չսխալուեցայ։ Կեանքիս մէջ ամենաքաղցր օրերն են այն օրերը, որոնց ես անց եմ կացնում նրա օրհնուած օջախում. այնտեղ յաւիտենական խաղաղութիւն և անդորրութիւն է թագաւորում։

Նրա ծանօթները բոլորն էլ ազնիւ ու չարքաշ մարդիկ են։ Ինքը տանուտէրը միշտ ուրախ, հիւրասէր և շատ ազուհացով մարդ է, այնպէս որ ամենքն էլ մեծ բաւականութիւնով են յաճախում Կուլիբինի համեստ բնակարանը։ Երբեմն դիշերները նրա տանը քէֆեր են սարքվում, մանաւանդ որ ինքը ածում է տուղի ու դաշնամուրի վրայ և իր մաքուր ու բարակ ձայնովն էլ բաւականին լաւ երգում։ Նա երաժշտութիւն և թատրոն շատ է սիրում։ Ա՜խ, երբ արդեօք ես նրան կրկին կարող եմ տեսել, և կըտեսնեմ,— Ատուաձ գիտէ։ Ես արդէն ծերացած եմ, թոյլ եմ, իսկ Պետերբուրգը մօտ չէ։

Կօտարօմինը փայտի վրայ յենուելով հազիւ վեր կացաւ բազմոցից։

— Լաւ մարդ է ձեր սիրելին, մտախոհ կերպով ասաց Վասիլի Վասիլեվիչը։ Ընորհակալ եմ, Միխայիլ Անդրէեվիչ, որ մանրամասն տեղեկութիւններ տուիք երկրացուս մասին։

VII

Նիժնիի երկնակամարը շառագունել էր։ Ուսպենսկու եկեղեցու մօտ սաստիկ հրդէհ կար։ Կրակը դադարեցնելու համար արած բոլոր ջանքերը ոչինչ յաջողութիւն չէին դտնում. մանաւանդ որ չքաւորների հին, փայտեայ բնակարաններն աւելի առատ նիւթ էին տալիս կրակին։ Այդ ծուխառած և դարերով ծխոտուած տնակներն անհաւատալի արագութիւնով չքանում էին, թողնելով դետնին մէայն մոխրի փութքրիկ կոյտեր։ Կարելի էր արդեօք փրկել Կուլիբինի տունը, որը ոչնչով չէր դանազանվում նոր այրուած խրճիթներից։ Նրա ապերսող բազմանգամ ընտանիքը, ւիերցրած իր հետ դանազան իրեր դուրս էր եկել փողոցը. Իվան Կուլիբինի ձեռքում մէայն թղթեր կային։ Նա աշխատում էր հանդստացնել իր կնոջը և որդիերանցը, իսկ ինքը բոլոր ժամանակ իր դործիքների վրայ էր մտածում։ «Գործիքներս փրկիր, սիրելիս», կարողացաւ նա շշնջել Պետերբուրկովի ականջին։ Նա իսկոյն նրան դցեց այրուող տունը, մի քանի մարդկանց օդնութիւնով դուրս բերաւ բոլոր գործիքները, դարսեց նրանց իր թանկագին ուսուցչի առաջ։ Դրանից աւելի ոչինչ չէր կարելի փրկել. տունը վրաս։

Իսկոյն բոլորի երկիւղալի հայեացքները դարձան դէպի այդ մեծ, գեղեցիկ և նորաշէն տունը, որը դանվում էր այրուող տների կարգում։ Կրակն արդէն լավեց նրա փայտէն սլատը։

— Ո՛վ քրիստոնեաներ, հնչուեցաւ մի դողդոջուն ձայն։ Բաղմութիւնը յետ նայեցաւ և ամենքն էլ դլխարկները վերցրին։ Մի ուխտաւոր ծերունի, որին ամենքը յարգում ու սիրում էին, դլխաբաց կանդնած էր այնտեղ։ Հրդէհի լոյսը լուսաւորում էր նրա ձիւնի պէս սպիտակ մօրուսը. ով քրիստոնեաներ, փրկեցէք իմ վերջին ինչքը։ Ես ծեր եմ, ինձ ոչինչ չէ հարկաւոր. ընտանիքիս խղճացէք. նա քնելու տեղ չի ունենալ։

— Ո՛հ, մի իմդրիր, Իվան Պետրովիչ, քո տունը փրկելու համար մենք ամեն բան կանենք։

Բայց ինչ կարող էին անել այդ բարի մարդիկն ամեն

բան քանդող, աւերող կրակի և քամու դէմ: Հրաշէջ գունդի մասին խօսք աւելորդ է խօսել. նա այդժամանակ ամենաողբալի վիճակի մէջ էր: Մի ժամից յետ գեղեցիկ, նորաշէն տան տեղ ծխում էր աւերակների անճոռնի կոյտը: Թոյլ բոցը լուսաւորում էր ծերունու դէմքը, որը ուժից ընկած, նստել էր կիսայրուած դերանի վրայ:

—Գնա՛ք գաղթեցաք, Իվան Պետրովիչ, ասում էր Պեատերբիկովը, ոչ մի բոպէ մենակ չթողնելով Կուլիբինի ընտանիքը,—թէ ձեղ և թէ ձեր բոլոր ընտանիքին անհրաժեշտ է հանգստանալ. գնանք մեր տուն:

—Չնորհակալ եմ, Իվան Իվանիչ. դուք կնոջս և որդուս տար, սիրելիս, նրանց հանգստացրու, իսկ ինձ թող այստեղ. ես մի ժամից յետոյ կըգամ:

Պեատերբիկովը տհաճութիւնով թողեց իր ուսուցչին:

«Այս բարի մարդն ինձ համար երկիւղ է կրում, մտածում էր Կուլիբինը, տխուր ժպիտն երեսին նայելով նրա յետևից, «կարծես թէ նա ծանօթ չէ իմ համբերատարութեանը»: Նրա ալևոր դլուխը խոնարհուել էր ներքև, դառը մտածմունքները պաշարել էին նրան: Նա իր կեանքի մէջ քիչ չարչարանքներ չէր քաշել: Բայց նրա համար ամենաածանր և անտանելի էին այն չարչարանքները, որոնց նա ենթարկուեցաւ իր մայրենի երկրում, ուր նա եկել էր մի վոքր հանդիստ առնելու երկար ու ծանր աշխատանքներից յետոյ: Նա ուզում էր իր երկրացիների մէջ մեռնել, որոնք սկզբում թէպէտ նրան կախարդի տեղ ընդունեցին (այս բանը յիշելիս նա ժպտաց), բայց շուտով անկեղծօրէն սիրեցին: Չէ որ Պետերբուրդի թշնամիներն էին և ոչ թէ այս պարզամիտ մարդիկը, որոնք բանն այն տեղը հասցրին, որ նրա արած գիւտերից ամենասիրելի և ամենաօգտակարը—«լինքնագնաց նաւը» հրապարակաւոյն ածուրդով վ ա յ տ ի տ ե ղ ծախուեցաւ: Փերունկին սառստաց և արտասուքի մի խոշոր կաթիլ նրա ալեզարդ մօրուսի վրայով ներքև գլորուեց: Բայց ի՞նչ բան էր այս հրդեհը համեմատած նրա մխա ցաւի հետ: Եթէ նա դիտենար, որ իր ընտանիքին գէթ մի կտոր հաց է թողնում, նա չէր տիրել իր տան կորստի վրայ: Երբ նրա «լինքնագնաց նաւը» լողում էր Վօլգայի վրայ, ժողովուրդը «կեցցէ» էր

գոռում և գլխարկները վեր նետում. բայց նրա ինչ մեղն է, որ ընդունուած են ֆրանսիական անյարմար և թանկագին ձիաքարշ մեքենաները: Իսկ որքան նեղացան դերմանացի գիտնականները, որ մի ինքնուսն արհեստական ոտ շինեց: Նրանք չկարողացան նրան այդ բանը ներել. նրա դիւաը քննում էին, վիճում էին այդ մասին, մինչեան տարի էլ պատուհասներ էին գրում: Մինչև որ այս բանը շարունակվում էր, մի ֆրանսիացի մեխանիկ արհեստական ոտ բերաւ Փարիզ և ներկայացրեց Նապոլէօն I, որպէս իր ձեռքի արդիւնք: Կեղծ հնարագէտը հաւակուեց և հարստացաւ:

Այդ լսելին նրա ետևից մի փազաքշական ձայն հնչուեց:

—Թուք կրմրսէք, Իվան Պետրովիչ. ցուրտ և խոնաւ առաւօտ է: Մի բաժակ տաք թէյը կրկազդուլէ ձեզ: Գնանք տուն, ձեր կինն անհանգիստ է ձեր մասին:

— Տո՛ւն: Ես՝ էլ տուն չունիմ: Է՜հ, երևի այսպէս էր վիճակուած, որ այս իմ ձեր հասակում գլուխս ուրիշի ասեղ առաստաղի տակ պատապարեմ... Թէ՜հ, լաւ, լաւ, չեմ անիլ, գիտեմ, որ դու աղնիւ և բարի մարդ ես: Գնանք տուն: Նա, յենուելով Պետերբիկովի թևին, դժուարութիւնով բարձրացաւ տեղից: Պետերբիկովը արտասուքն աչքերին՝ նայում էր թէ ինչպես երէկուայ դեռ առոյգ մարդն այսօր հազիւ էր ոտերը շարժում: Նա աշխատում էր իր ուսուցչի բազմանդամ ընտանիքը, որքան կարելի է, լաւ պայմանների մէջ պահել, թէպէտ այդ բանը նրա համար, իր այնպիսի չքաւոր վիճակում, հեշտ չէր: Կուլիբինը շուտով նրա մօտից տեղափոխուեց իր աղգակցի մօտ, բայց նա, մինչև որ իրան համար «ռեպհական անկիւն» չճարեց, չհանգստացաւ: Դա մի փոքրիկ, նեղ, խոնաւ և ցուրտ խրճիթ էր, առաջը մի փոքրիկ այգիով: Այդ բնակարանը վերջնականապէս քայքայեց Կուլիբինի առողջութիւնը, այնպէս որ նա իր կեանքի վերջին երեք տարին անկողնի մէջ անցկացրեց: Բայց Կուլիբինը հիւանդ ժամանակն անգամ գծագրութիւնով և մաթեմաթիքական հաշիւներով էր պարապում, աշխատելով վերջացնել նեվայի վրայ շինելու «երկաթէ մշտական կամուրջի» նախագիծը:

Մահը խանգարեց նրան վերջացնել այդ աշխատանքը։ 1818 թուի յունիսի 30-ին Կուլիբինը մեռաւ։ Տանը մի կոպէկ անգամ չկար. նրա կինը արտասուք թափելով, իր, ամուսնու շինած ժամացոյցը տարաւ գրաւ դնելու։ Հանգուցեալի բարեկամները՝ Պետերբուրգովին գնահատոր ընտրած, թաղման բոլոր հոգս ու ծախքը իրանց վրայ առան։ Յուլիսի 4-ին ժողովուրդի խուռն բազմութիւն դէպի Կուլիբինի խրճիթն էր դիմում։ Կիսախարխուլ տնակի դռների մօտ կանգնած էին Նիժեգօրօդի դիմնազիոնի աշակերտներն իրանց տէուչի և ուսուցիչների հետ։ Նիժնիի նշանաւոր վաճառական դասը Հանգուցեալ քաղաքացու դագաղը բոլոր ժամանակ իր ուսերի վրայ էր տանում։ Ազգ ուսուցչին յանձնուած էր բարձի վրայ տանել Հանգուցեալի ոսկէ շքանշանը։ Նոր-նոր խմբեր ճանապարհին միանում էին յուղարկաւորութեանը. ամեն ոք կամենում էր մինչև գերեզմանատունը հետևել Կուլիբինի դագաղին։ Ամառային այրող ճառագայթները լուսաւորում էին այս տեսարանը, կենդանի փայլ տալով Հանգուցեալի հանդիստ և նիհար դէմքին. նրա սպիտակ մօրուսն ու մազերն արծաթի պէս փայլում էին։ Պետերբուրգովի տչքը չէր հեռացնում այդ բարեհամբոյր դէմքից. նա այլևս չկէտք է տեսնէր այն մարդուն, դէպի որը նա խորին յարգանք ու սէր էր ղղում։ «Ո՛հ, դու, իմ ուսուցիչ, շշնջում էր նա արտասուքները սրբելով, ահա քո վարձատրութիւնը, ամբողջ Նիժնին հետևում է քո դագաղին, իսկ քո բարի վիշատակը կենդանի կմնայ յաւիտեան»։

Թարգմ. Ա. Ղ. Ծ. Ա. Տ. Ո. Ի. Ե. Ա. Ն։



Ո՞Վ ԱՒԵԼԻ ՃԱՐՊԻԿ Է

(Մի փոքրիկ ողբերգուԹիւն 9-ը պատկերով)

Թռչիկն իր գլուխը Թևի տակ դրեց,
Թռչելուց դադրած՝ նա քաղցր քնեց։

***

Յանկարծ նրա մօտ բզզաց ճպուռը,
Թռչնիկը կլսատ բացաւ աչերը։

***



Ճանճիկ-խաբեբան նրան մօտեցաւ,
Թռչնիկն իսկոյն գլուխը բարձրացրաւ։

***

Իսկ մեր ճանճիկը անհոգ Թռչում էր,
Եւ նա ծաղրելով, կարծես, ասում էր.
«Թէպէտ ճարպիկ եմ, բայց դու ինձ բռնել
Երբէք չես կարող. գոնը է մտածել»։

***

Եւ Թռչնիկն շուրջ երկար ժամանակ
Թռչկոտում էր նա անվախ, համարձակ.
Իսկ աչքն տակից Թռչնիկը դիտում.
Նա չար ճպուռին աչքից չէր թողնում։

* *
*

«Սպասիր, դու լինճ. ես հանաք կատեմ,
Անշարժ իմ տեղից, ես քեզ կըբռնեմ»։

* *
*



Եւ վայրկեան չանցած՝ նա մի «Համ» արաւ,
Անբախտ ճպուռին կոցի մէջ առաւ։

* *
*



«Չանաքների՞ տեղ դու լինճ քո կեանքը
Զոհեցիր, ահա», ասաց Թռչնիկը.
Ասաց ու խոկոյն խղճուկ ճպուռին
Կուլ տուաւ ինչպէս մի հատիկ չնչին։

* *
*



Եւ Թռչնիկն ահա ճպուռին այսպէս
Պատժելով կարգին և արժանապէս,
Գլուխը կրկին Թևի տակ դրեց
Եւ առաջուայ պէս նա հանգիստ քնեց։

Թարգմ. ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ։

ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ

(Զրույց)։

I.

րը մթնանալու վրայ էր։ Օտանը բարձրացաւ լուսամուտ տախտակի վրայ, ծալապատակ նստեց ու սկսեց շտապ-շտապ երէկուանից սկսած օձիքը կարել։ Նրա նիհար, վոքրիկ մարմինն ամբողջապէս կուչ էր եկել և կծել լուսամուտին։ Ժամանակ առ ժամանակ նա մտիկ էր տալիս մթնոլորն լուսամուտ մօտ նստած իր աշխատող մօրն ու կրկին սկսում կտաւի վրայ նկարած օրինակը դիտել...։

—Մին, երկու, երեք... դեռ էլի երեք բանուածք

մնացել է կարելու, կամացուկ շշջեց Օսանը, ճակատի վրայ եկած մազերը յետ տարաւ ու սկսեց աւելի եւս եռանդով կտրել ու շինել մնացած բանուածքները:

— Հէրիք է, մատաղ, թող. արդէն մթնել է, դիմեց նրան մայրը.— առանց այն էլ դու արդէն պրծել ես բոլորովին. երկու օր է ինչ շարունակ նստած ես: Գնա, աղջիկս, գնա: Տիկնիկն էլ ու գաւլթն էլ տխրել են քեզ համար: Դէ, գնա վազվզիր...:

— Խոկոյն, իսկոյն, մայրիկ ջան. այ, միայն երկու բանուածք է մնացել: Քանի որ դեռ քիչումիչ երևում է, չէ՞ որ պէտք է աւարտել. ախր մենք ոչ մամ ունինք, ոչ էլ նաֆթ, աւելացրեց Օսանը երևակայական-լուրջ ձայնով:

— Ինչու՞ ես աչքերդ փչացնում. աւելի լաւն այն է գնաս մանրավաճառից նաֆթ բերես:

— Այն էլ առանց վողի, չէ՞. ամենևին:

— Հետը համ թէյ, համ էլ հաց կըբերէիր, շարունակում էր մայրը:

— Աւելի լաւն այն է իսկի չասես, պատասխանեց Օսանը ձեռքը շարժելով:— Առանց այն էլ երէկ առաւօտ ձաւարն ու թէյը ես զօռով բերեցի: Խանութպանն ասաց՝ որ դեռ նախ և առաջ հին պարտքներս վճարենք:

— Բայց եթէ մենք նաֆթ ունենայինք, ես իմ ձեռքիս գործը շուտ կըպրծնէի և դու էլ կարող կըլինէիր վաղը վող տալ նրան, պնդում էր մայրը:

— Այո, կարող կըլինէի, կասկածանքով ձայնը երկարացրեց Օսանը:— Իսկ եթէ դու աշխատանքիդ համար չստանաս: Մէկ էլ տեսար ասացին՝ «տանը չէ, թողէք մնայ շինածդ գործը, յետոյ եկէք»: Արդէն քանիցս անգամ այդպէս է եղել: Աւելի լաւն այն է շուտով աւարտեմ օձիքը, ծախեմ և առնեմ ամեն ինչ— և՛ նաւթ, և՛ շաքար, և՛ թէյ, և՛ հաց... ամեն բան, ամեն բան...:

Մայրը սուս էր կացել. նա փորձով գիտէր, որ եթէ

Օսանին նոյնիսկ մի ամբողջ ժամ շարունակ ասէիր, նա դարձեալ չէր անիլ այն, ինչ որ չէր կամենում, և ուրեմն, ինչ ասել կուզի, առանց փողի չի դնալ խանութ: Թէև մայրն ինքը կրգնար, սակայն նա «սովոր չէր» այդ բանին, որովհետև երկար ժամանակ էր ինչ տան մէջ լիակատար տնտեսուհին անողն ու ամեն բան կարգադրողը Օսանն էր:

Մայրը Օսանից աւելի լաւ բարեկամ չունէր. նրա հետ էր բաժանում իր ուրախութիւնն էլ, վիշտն էլ:

Օսանն ուժի տարեկան է: Նա ամենայն հաճութիւնով, եռանդով և ուրախութիւնով կառավարում է տունը. միայն մի բան նրա համար ծանր է, այն է՝ խանութի դնալ և պատքով բան բերելը: Այդպիսի դէպքերում մինչև անգամ մօր սէրն էլ չէ օգնում: Պատահել է որ մայր ու աղջիկ երկու օրով ոչինչ չեն կերել. և ահա միայն այդպիսի ժամանակ, երբ քաղցը սաստիկ էր լինում և յոյս էլ չէր լինում քաղցն անցկացնու կամ վաղը, կամ միւս օրը, Օսանը յանձն էր առնում դնալ:

Բայց ինչ էր նստում այդ բանը նրան: Մայրը երկար առում էր, աղաչում էր, վայելչացնում էր, որ հազիւ-հազ վերջապէս Օսանը յօնքերը կիտած և շառաչօտ քաւթառ պառաւից աւելի վատ՝ քթի տակին վնթ-վնթալով գլխին էր դնում փոքրիկ թաշկինակն ու դուռը ամուր վրաքաշելով՝ ուղևորվում դէպի չարաբաստիկ տեղը—դէպի խանութ:

Օսանն, ահա, կանգնած է խանութպանի առաջ:

—Ինչ՞ ես ուզում, դիմում է Օսանին խանութպանը, որնոր ձիու պոչով սրբում էր սեղանատախտը:

—Ինձ մի հինգ դրուանքայ հայ տուէք, կամաց և անհամարձակ ասում է Օսանը:

Խանութպանը լուռ կշռում է հացը:

—Ուրիշ ինչ:

—Վեց մսխալ էլ թէյ:

Այդ էլ է չափվում:

Այնուհետև, այլևս չսպասելով ուրիշ հարցմունքների, աղջիկն շտապում է մեանելն ասել.

— Մի քառորդ գրուանգայ շաքար...

Խանութպանն ընտրում է աւելի վատ կտորտանքն ու, կշռելուց յետոյ, յօնքերը վրաստուած վաթաթում հատ մոխրագոյն թղթի մէջ։

— Մի քառորդ էլ լուղ, կրկին լսում է։

Լուղն էլ է կշռւում։

— Ուրիշ ոչինչ, վերջապէս հարցնում է խանութպանը, արդէն առաջուց լսմանալով թէ ինչ ու ինչ է լինում ստոլորաբար Օսանի առնելիքները։

— Ուրիշ ոչինչ... գրեցէք դրքումը, խնդրեմ... ասում է երեխան աւելի ցածր ձայնով և սկսում պնաճները թաշկինակի մէջ տեղաւորել։

— Էլի առանց փողի։ Ձէ որ ես ստացի թէ՝ այլևս չեմ տալու, մինչև հին պարտքը չտաս, լրջօրէն նկատում է խանութպանը։

Օսանը տուս է կացել և կարմրատակել, բայց և շարունակում է պնաճները տեղաւորել թաշկինակի մէջ։

— Փողը երբ ես բերելու։

— Վաղը չէ մեւս օրը... մայրս իր ձեռագործի համար կըստանայ... ես կըբերեմ... շշնջում է Օսանը։

— Օհօ, հօ, հօ, «կըբերեմ»։ Ինչ խորամանկն է։ Առաջ ապրանքն առնում է, յետոյ նոր է ասում թէ՝ «գրեցէք»։ Դեռ դու մի հարցրու թէ՝ ապառիկ կըտան, կամ ապրանք կայ։ Տես թէ ինչ սատանան է։

Օսանը կարմիր տակ է կտրուել. խանութպանը գուշակեց նրա խորամանկութիւնը։ Խեղճ աղջիկը վախենալով որ մերժում կըստանայ, նա դեռ առաջ պաշարը կշռել տուեց և սպաս թէ յայտնեց որ փող չունի։ Խանութպանը հօ կշռածները յետ չի վերցնելու։

Եւ իրաւ որ նա ոչինչ չվերցրեց, Օսանից երեսը շուռ տուեց և գլուխը նշանակեց նրա վերցրածները:

— Մօրդ ասա, որ անպատճառ վաղ ուղարկի, տես լայրեց խանութպանը: Վերջին անգամն եմ տալիս: Տես, այլևս էլ կասես...:

— Լաւ, կասեմ, ասում է Օսանն արդէն աւելի համարձակ, շտապով կապոցը վերցնում, թաշկինակը կրծքին հաստատելն ու խանութից դուրս վազում:

Այդ տիուր պատկերներն աւելի կենդանի կերպով նրա առաջ այժմ, երբ նա շտապ-շտապ օրինակի վերջին բանաւածքն էր կարում:

Փառք Աստծուն, դռնէ վաղը պէտքը չի լինել առանց փողի խանութ գնալ:

Օսանը նրա համար էր օձիքի եաւլից ընկել, որպէսզի կարող լինի մի ելք գտնել այդ դժուար դրութիւնից դուրս գալու: Ինքն էր որոնել գտել ձեռքի կտաւը, ինքն էր նկատել օրինակը և՝ չնայելով աղատ թուչնի նման դաշտում թուչփռտել ուղելուն, երկու օր իրար վրայ կամակորութիւնով դարձից չհեռացաւ: Ի՞նչ անհնք որ այնպէս աստիճ քաղցած է, մինչև վաղը կարելի է համբերել: Իսկ վաղը կրծակի օձիքն ու ամեն բան կըգնի իր տեղ: Իհարկէ որ նա առաջ էլ էր աշխատում, որովհետև նա վաղուց էր որ մօրն օգնում էր, բայց ոչ մի անգամ իր աշխատանքը չի ծախած:

II.

— Ահա և պատրաստ է...:

Այս խօսքերով լուսամոի տախտակից արագութիւնով ներքև թռաւ Օսանը և յաղթական կերպով սկսեց իր ժպտացող մօր առջև շարժել պատրաստի օձիքը:

— Տեսնում ես, ահա վերջացրի, հրճւում էր Օսանը:

Օսանն օձիքը խնամքով դրեց պահարանի վրայ և ներս մտաւ մուճ, խոնաւ, բոլորովին անկրակ, սալայատակով խոհանոցը, ուր շօշափելով դռան սեղանի վրայ դրած գաւաթը, որի մէջ մի ժամ առաջ նա ջուր էր ածել, որպէսզի կողքերին կպած ու չորացած կերակուրը փափկի, և մէջը դնել երէկուայ կերած հացից մնացած չոր տակերը:

Օսանն՝ ահա, հէնց այդ ընթրիքի վրայ էր պրծել իր բոլոր յոյսը, երբ այնպէս կամաց-կամաթիւնով մերժում էր խանութի դռնապը:

—Այ, ես կուտեմ, տասց նա կամացուկ և ախորժակով ծամեց փափկած չոր հացի կտորը. յետոյ ջուրը թափելով՝ սկսեց ձեռքի մէջ հաւաքել կերակրից մնացած մեծ կտորները:—Այս փափկած հացի տակը կըտամ մայրիկին, նա էլ է քաղցած: Իսկ վաղը ես ինչպէս պէտք է հիւրասիրեմ նրան. հրաշալի կերպով: Կրգնեմ թէյ, շաքար... Կրգնեմ հաց, նոյնպէս և իւղ, ու էլի մի ուրիշ աւելի համեղ բան...:

Օսանն ուրախ դէմքով և թուխկոտելով վաղեց մօտ, նրա բերանի մէջ դրեց հացի տակը, ծիծաղեց և դուրս վազեց դաւիթ:

Է՛, ինչքան ժամանակ է հա՛, որ նա չի եղել այդ-տեղ։ Արդեօ՞ք նոր ոչինչ չկայ։ Արդեօ՞ք քարերի մէջ մատ-ղաշ խոտը դեռ չի բուսել։

Օսանը դաւիթի մէջտեղը կանգառաւ, թեթև կերպով կկոցելով աչքերը, և հաճութիւնով ներս շնչեց ապրիլի թարմ օդը։ Օսանն այդտեղ չէր սիրում ժամանակ անց-կացնել. այլ դաւթի մի կողմում աչքաթող արած վայ-տարան կար, մեծմեծակ՝ ցնցոտիներից իր շինած տիկ-նիկներով Օսանն օրուայ մեծ մասն այնտեղ էր անց-կացնում։

Դեռ խոնաւ էր գաւթում։ Կուչգալով նա անցաւ անկիւնները, խոտի հետք գտնելու համար. սակայն խո-տը դեռ չէր բուսել։ Պատռած կիսաշրիկներով տոտիկները թմրեցին թաց թեփուկի մէջ։ Օսանը դողում էր ցրտից։

— Ո՛չ, դուրս է... աւելի լաւն այն է գնամ տուն և պառկեմ քնեմ, շշնջեց նա։—Վաղ առաւօտեան պէտք է շուտ վերկենալ։

Մէկ էլ, երբ արդէն վաղում էր գաւթում, որտեղից որ էր կատուի թոյլ, խղճալի մլաւոց լսուեց։ Օսանը կանգ-առաւ և ականջները սրեց։ Ձներն ու կատուները նրա հա-մար ընկերների տեղ էին բռնում։

— Կարծես թէ կատուի ձայն է, չէ՞... բայց այս ո՞րտեղ է նա մլաւում, շշնջեց աղջիկն ու էլի շարունակեց ականջ դնել։

Նա ամբողջ դաւիթն աչքի անցրեց, նայեց նոյնպէս բաց անառանոցի ու համբարանոցի մէջ։

«Միաո՛ւ», լսուեց մօտիկից։

— Ա՛խ, տէր իմ Աստուած. այս ո՞րտեղ է նա է՛։

Օսանը կզեց և սկսեց խողովակների տակ դրած ամեն մի դոյլի ետևը մտիկտալ և վերջապէս նրանցից մինի ետևը տեսաւ երկարումէկ ձգուած, մոխրագոյն, նիհար, ներսընկած կողերով և ճպռոտած աչքերով մի կատու։

Կատուն՝ Օսանին տեսնելուն պէս ուզեց էլի մլաւել, բայց չկարողացաւ և միայն բերանը բացեց ու ժնգժնգացրեց իր սուրսուր ատամները։

—Խեղճ, այդ ինչ հալի ես դու։ Ինչպէս էլ նիհար ու զարհուրելի ես, ասում էր Օսանը և խղճահարուած նայում կատուի վրայ։ — Դու հազիւ ես շնչում... շատ կարելի է սոված ես. ով գիտէ քաղցից ես տանջւում... Ա՛յ, մի սպասիր ինձանից, որ ես քեզ բան տամ, ես ինքս էլ ոչինչ չունեմ։ Աւելի լաւ կանես դնաս այնտեղ, մեր տանտիրանց խոհանոցը, ուր, անշուշտ, քեզ համար ուտելու բան կը ճարուի։ Երէկուանից սկսած ես ինքս էլ բան չեմ կերել. մայրս էլ է քաղցած։

Կատուն աչքերը բացեց, ատամները ժնգժնգացրեց և կամաց ու երկար մլաւեց։

—Շատ կարելի է թէ առողջանայ և քէֆն էլ տեղը գայ, եթէ ես սրան կերակրեմ...։ Փլ՛ուս, փլ՛ուսիկս, փաղաքշանքով ասում էր Օսանը և կռացած նայում կատուին։—Դու բոլորովին քաղցած ես, դու ինձանից աւելի քաղցած ես։ Դու մանգալ անգամ չես կարողանում։ Թէ, լաւ է, լաւ է. միքիչ սպասիր. այսօր ոչինչ չկայ, բայց վաղը ես քեզ կրկերակրեմ...։ Վըթ՛, ինչպէս էլ ցուրտ է... իսկ քեզ համար հօ, խեղճ անասուն, աւելի ևս ցուրտ կըլինի դռանը գիշեր ժամանակ։ Ես քեզ կըտանեմ մեր Համբարանոցը, հա՞։

Եւ Օսանն իսկոյն վազեց գնաց տուն բանալիքը բերելու։

— Պառկիր քնիր, Օսանիկս։ Այդ էլ հերիք է քեզ համար, ինչքան որ վազվզեցիր, ասաց մայրը։

—Իսկոյն կըզամ, մայրիկ ջան։ Դռանը ես մի մեծ սոված կատու գտայ։ Այս գիշեր պէտք է նրան համբարանոցում տեղաւորած, թէ ոչ խեղճը ցրտից կըսիէտանայ, պատասխանեց Օսանն ու դարձեալ ծլկեց։

Օսանը բացեց Համբարանոցը և այնտեղ լծակիցը-ւած հինուսին կտորտանքներից փափուկ տեղ պատրաս-

տելով՝ վազեց կատուի մօտ և մնաց նրա կշտին տարակուսութեան մէջ կանգնած։ Ի՞նչպէս տանէր կատուին. եթէ յետին ոտներից կամ պոչից բռնէ ու քարերի վրայով քաշ-տար տանէր, այնժամանակ ողորմելի անասունին շատ ցաւ կըտայ, բայց ամբողջապէս ձեռքով վերցնելն էլ, որ բոլորովին ցեխի մէջ թաթախուած էր, անհաճելի բան էր։ Հապա ինչ անէր։

—Այ ինչ. ես միանգամից սրա չորս ոտերից էլ կըվերցնեմ և շտապ-շտապ կըտանեմ Համբարանոց, վճռեց Օսանը։

Եւ հէնց այդպէս էլ արաւ, թէև շատ էլ վախեցաւ,

և համարեա քիչ մնաց ձեռքից բաց թողնէր կատուին, երբ նա ոտները դէպի վերարած ժամանակ ողոզած դլուխը ցած թողեց և խղճալի կերպով մլաւեց։ Օսանը քայլերն արագացրեց և միայն այնժամանակ նա ազատ շնչեց, երբ իր բեռը վայր դրեց հնոտիի վրայ։

—Այստեղ քեզ համար համ աւելի տաք, համ էլ աւելի ապահով կըլինի, ասաց նա,—թէ չէ թաթուխը քեզ անպատճառ դուրս կըդցէր, երբ առաւօտեան սկսէր դաւիթն աւլել։ Ես նրան շատ լաւ եմ ճանաչում...։ Վայ, վայ, վայ, ինչպէս քաղցած եմ... սիրտս խառնւում է...։ Դուտ դնամ պառկեմ քնեմ։

III.

Առաւօտեան գարթեցրեց Օսանին մօր հազը. նա տեղի մէջ նստեց և մեծ դժուարութիւնով բացեց քնաթաթախ աչքերը։

—Դու արդէն վեր ես կացել, մայրիկ։ Հիմա ժամն քանիսն է. ես հօ չեմ ուշացել։

—Ո՛չ, չես ուշացել, պատասխանեց մայրը։—Ես շատ վազ եմ վերկացել, գեռ նոր էր լուսանում։ Երկի երեկոյեան չկարողացայ երկար նստել, ուստի մտածեցի նրա վրայարվն այսօր բանեմ, եթէ ոչ չեմ կարող վերջացնել գործս։

Քանիմի րոպէից յետոյ Օսանն արդէն չիչփալէ լուացվում էր խահանոցում։

—Ես հիմա պէտք է դնամ. խոլոյն կըվերադառնամ, ասաց Օսանը։

—Այդ ո՞ր պիտի դնաս։ Մայրը չէր հաւատում Օսանի մտադրութեանը։

—Գնալու եմ վերի շուկան։ Երբեմն դու էլ քո ձեռագործն այնտեղ ես վաճառում, չէ՞...։ Ա՛խ, հապա

կատմուն...: Պէտք է մի գնամ ակրոամ տեսնեմ ինչ է եղել...: Ուղիղ ու. համ էլ համբարանոցում տաշեղ կրժոզովեմ. խակի վայտ չունինք, մեկ կտոր էլ չի մնացել:

Օսանը համբարանոցից վերադարձաւ տխրած, որովհետև պիշերը կաւուի պրոթիւնը չէր լաւացել:

Տաշեղն ածելով վառարանի մէջ՝ պատրաստուեց դրնաչու. գլխին գցեց հին թաշկինակը, հագաւ վերարկուն, և մեկ էլ յանկարծ սիրտը կտրած նայեց իր ոտերին վրայ: Կօշիկները խակի բանի նման չէին:

Մայրը հրճուանքով նայում էր իր աշխատասէր աղջկայ վրայ:

—Ի՞նչ ես մտածիր. քանիսմ ես ծախելու օձիքը, հարցրեց մայրը:

—Գաւսրդ մանէլժով, պակաս չի լինիլ: Ամէն ամեն բան պէտք է աւնել, ինքդ հօ լաւ պիտես էլի,—լրջօրէն պատասխանեց Օսանը:

—Գաւ աւելի թանկ պահանջիր, որովհետև շուկայում միշտ աւելի քիչ են տալիս: Բայց աւելի լաւ կանես գնաս հրէայ կնիկների մօտ, նրանք աւելի շուտ կը գնեն: Նաֆթի աւնել չմոռանաս, եթէ ծախես, աւելացրեց մայրը:

—Մի վախենար, չեմ մոռանալ: Ես գիտեմ թէ գործդ աւարտելու համար ինչ է պէտք:

—Զգոյշ եղիր, այնտեղ քեզ կրծեծեն, կամ օձիքը կրկնեն ձեռքիցդ:

—Ինչպէս չէ, կրկնեն. ես էլ տալ, չէ՞, ինքնավստահ կերպով պատասխանեց Օսանը:

Եւ գլխին գցելով թաշկինակը՝ հանապարհ ընկաւ:

Ուրախ, սիրտը թրթռալով առաջ էր գնում Օսանը, երևակայելով իր ապագայ գնելիքների մասին, որ պէտք է վերցնէր ոչ թէ պարտքով, այլ իր սեպհական վաճառով:

«Հացը, հաշւում էր նա ինքնիրան,—արժէ վեց կոպէկ, շաքարն—ութ: Վեց և ութ... ինչքան կանէ. տաս-

նուչքրա։ Այն, տատնուչոլս։ Թէյը—հինգ կոպէկ։ Տատնուչոլս և հինգ—անում է տատնուչինը։ Իւղն էլ արժէ վեց կոպէկ... նշանակում է ընդամենը ես պէտք է մխսեմ քսանուհինգ կոպէկ։ Հապա նաֆթը։ Այդ ես բոլորովին մոռացայ։ Էհ, ասել է այդ բաներից մինը չպէտք է առնել։ Իւղը, հը՞։ Իհարկէ, առանց իւղի էլ եօլայ կերթանք։ Բայց եթէ յանկարծ, փոխանակ քսանուհինգ կոպէկ տալու օձիքին, երեսուն կոպէկ տան, կամ մի ուրիշը մինչև անդամ երեսնուհինգ կոպէկ տայ, երևակայում էր Օսանը։ — Այնժամանակ ինչ անեմ...։ Այնժամանակ ես ձուկը կառնեմ և ձկնաթան կըզատրաստեմ։ Մայրիկը սիրում է ձուկը, ես էս սիրում եմ»...։

Օսանը քայլերն արագացրեց։ Ահա և շուկան իր հարուստ խանութներով, որոնց պատուհաններում այնպիսի ճոխ իրեղէններ է լոյսը դրուած, որ դրանց մեծամ մ ը լ ի ո ն ն ե ր ունեցողները կարող են գնել։ Միայն ափսոս, որ այն խանութներում ոչինչ չեն գնում, այլ միայն ծախում են։

Օսանը երկար թափառեց շուկայում. խեղճ աղջիկը շատ վաճառողների դիմեց, բայց նրանցից ոչ ոք չկամեցաւ տասը կոպէկից աւելի տալ։

Օսանը մի ամբողջ ժամ էս թափառեց պէտուպէն. վերջապէս խզտա յողնելով և չկարողանալով աչքերից դլորուող արտասուքները պահել, շուկայից հեռացաւ։ Փողոցում էս, ինչպէս և շուկայում... ոմ հոգն էր կորցնել քաղցած աղջկայ մասին հոգալը...։

IV

Կամաց-կամաց, աչերն արտասուքով լի, Օսանը գնաց տուն։ Յուսահատութիւնը պատել էր նրան։ Կորած էր ամեն ինչ—և՛ երկու օրուայ աշխատանքը, և՛ բոլոր հրապուրիչ յոյսերը։

«Այժմ ինչ պէտք է ասէ խեղճ մայրս», մտածում էր Յոանը: «Հայց արդեօք լաւ չի լինիլ, եթէ ես գնամ մեր տանտիրանց խոհանոցը: Նրանց տնտեսուհին շատ բարի է և աղախիններն էլ շատ են: Կարելի է թէ նրանցից մինումինը կրգնէ իմ կարած օձիքը»:

Տանտիրանց տնտեսուհին ճանաչում էր Յոանին: Դուրսը կամ խանութում նրան պատահելիս, նա միշտ քաղցրութիւնով նրան բարև էր տալիս և յաճախ էլ առում էր Յոանի մօրը.

— Դու շատ լաւ աղջիկ ունես: Նա այնպէս լաւ, աչքաբաց ու խելօք տանտիկին դուրս կրգայ՝ որ քէֆդ գայ:

Յոանը՝ տեղ հասնելուն պէս քաշէ տանդուրով արագ-արագ բարձրացաւ երրորդ յարկը և զգուշութիւնով բանալով մեծ, լայն խոհանոցի դուռը, ներսմտաւ և դռների մօտ կանգնեց:

Տնտեսուհին այնտեղ չէր. աղախինը յայտնեց, որ նա հէնց նոր դուրս գնաց: Յոանը չուզեց սպասել նրան օձիքը ցոյցտալ, ուստի և՝ բան չսպասելուց, նա սկսեց ուշիուշով գլուխ խոհանոցը:

Յոանը երբէք տեսած չէր այդպէս մաքուր, այդպէս տաք խոհանոց, որը հաղար անգամ լաւ էր իրանց սենեակից: Լուսամուտի մօտ լուացարարը և երկու աղախին հարթում էին լուացքն ու իրանց համար քթերի տակին փնթփընթում: Խոհարարի օգնականը կանաչին էր մաքրում և մին-մին անգամ էլ տեղղինի կտորտանքը բերանը գցելով ղրճղրճալէն ուտում: Խոհարարը՝ կրակի առաջ կանգնած կարգադրում էր: Կրակի վրայ մի ինչ որ բան էր թշթշում, արձակելով մի համեղ հոտ: Յոանի դոյնը թռաւ: Շատ քաղցած լինելուց՝ քիչ մնայ խեղճ աղջկայ սիրտ դնար:

Մի քառորդ ժամ անցաւ, սակայն դեռ տնտեսուհին չերևաց:

Վերջապէս շաքարաւազով ափսէն ձեռքին խոհա-

նոյ եկաւ տնտեսուհին կարմրատակած. երևում էր որ սաստիկ յուզուած էր։

— Ա՛յ, Պետրոս, — վրայպրծաւ նա խոհարարին, — քանի անգամ եմ ես քո երեսից յանդիմանութիւններ ստացել։ Աղջիկ-պատրոնն այսօր էլի բարկացած է թէ շաքարաւազի և թէ մլուս բոլոր բաների համար...։ Եւ յետոյ նկատելով Յոանին.

— Ա՛խ, Յոանիկ ջան, ինչ ես կամենում, սիրելիս։

— Ֆախում եմ այս օձիքը, շշնջեց Յոանը։

— Այդ դու ինքդ ես կարնչ, թէ մայրդ։

— Ես ինքս, թոյլ կերպով պատասխանեց Յոանը։ Նա խօսելու սիրտ չունէր։ Շատ մանգալուց յաղնելով և սմեն տեղ էլ անյաջողութեան հանդիպելով, նա արդէն վող ստանալու յոյսը կտրել էր։ Միայն թէ շուտ գնալ այդտեղից։

— Տես մի ինչ խելօքն է. և ինչպէս էլ լաւ ես կարնչ, խաչը վկայ...։ Ուրիշ աղջիկներն էլ այսպէս են չէ. նրանցն այն է ամբողջ օրը դաւթում և վողոյնեում քո ք ի տ ա լ ո վ պարապ-սարսակ մանգան, ասաց տնտեսուհին։

Յոանն ամաչելուց կարմրեց։ Նա արժանի չէր այդքան դովասանքի, որովհետև ինքն էլ ընդհանրապէս ուրիշներից պակաս չէր սիրում դաւթում վազվզելը, և մանաւանդ որ նա միայն իր պարտքն էր կատարել։

— Օձիքը համար պահանջդ որքան է, հարցրեց տնտեսուհին ուշիուշով գննելով կարը։

— Քսանուհինգ կոպէկ, պատասխանեց Յոանը անվճռողաբար։ «Ո՞վ է իմանում, կարելի է թէ առնի», անցաւ Յոանի մտքովը։ — Ա՛խ, ուր է, երանի թէ այդպէս անէր, ես թէկուզ աժան էլ կըտայի։

— Քսանուհինգ. ուհ, այդ ինչ թանկ ես ասում։ Այդքանը տանել էլ չես կարող, կատակաբանեց տնտեսուհին։ — Դու լաւ աղջիկ ես, ես կառնէի, բայց ինչ սրած որ վող չունիմ դեռ չեմ ստացել ամսականս...։ Խոկ դու,

աղջկերք, դիմեց նա ազախինններին, — չէք առնիլ. առէք, առէ՛ք:

— Մենք էլ դեռ չենք ստացել մեր ամսականները, պատասխանեցին նրանք ծիծաղելով: Նրանք գիտէին որ տնտեսուհին շատ ժլատ է և՝ հին փող տալը, հին հոգի տալը՝ մէկ է նրա համար:

«Ո՛չ, առնողը չեն, պէտք է դնալ տուն», մտածեց իրան մէջ Օսանը, անուշադիր կերպով լսելով այն զավասանքները, որ տնտեսուհին թափում էր նրա դլխին, և հարցնում մօր առողջութեան մասին...:

Մէկ էլ խոհանոցի դուռը լայն բացուեց և ներս եկաւ մի բարձրահասակ, լաւ հագուած կին: Դա տանտիկինն էր: Ազախինները մէկ ակնթարթում իրանց տեղերը բռնեցին:

— Չէնց ես ինքս պէտք է դամ քո ետևից, Մարօ, անբաւական ձայնով դիմեց նա տնտեսուհուն և մտածեց ժամանակ հարցական հայեացք դցեց Օսանի վրայ: Մարօն՝ նկատելով տիկնոջ հայեացքը, շտապեց օգտուել այդ յարմար դէպքից, որպէսզի տիկնոջ անբաւականութիւնն անցկենայ:

— Ա՛յ, աղջիկ-պարոն, մի պատիկ վառօտուհի է եկել մեզ մօտ, ասաց տնտեսուհին: Փախում է իր սեպհական կարած օձիքը:

— Ո՞վ է դրկել դրան այստեղ, հարցրեց տիկինը:

— Ոչ ոք, ինքն է եկել... նա այս դաւթումն է լինում, մօրը հետ միասին մեր տներումն են ընակվում:

— Երևի մրգի փողը պակասել է, իմաց կերպով ասաց տիկինը:

— Ի՞նչ մրգի փող, քանի որ ուտելու հաց չունին: Ձատ խեղճ են, աղջիկ-պարոն: Մեր ու աղջիկ միմիայն իրանց ձեռքի պտղունցով են ապրում: Բայց ինչպէս են ապրում. մեղքդ կըգայ որ տեսնես. կենում են համարեա մի խորն ընկած տներքնատնում, որն այնպէս խոնաւ է, և այնպէս մութն է ...: Մայրը հօ ոչ մի այն

ցերեկները, այլ հայմարիր թէ ամբողջ գիշերներով էլ նստած կար է անում, բայց և այնպէս սարսափելի աղքատութեան մէջ են։ Ես երբեմն տեսել եմ աղջկան մանրավաճառից բաներ գնելիս. գնածներն էլ լինում է միայն հաց և թէյ՝ էլ ուրիշ ոչինչ...։ Ինչ ասեմ, աղջիկ-պարոն։ Ճիշդ է, աղքատ են, բայց աղնիւ աղքատ են։ Ինչքան որ այժ ունին կաշխատեն, բայց գնալ ողորմութիւն խնդրել... երբէք չեն անիլ. աւելի լաւ կը համարեն քաղցած մեռնել։

Թէև տնտեսուհին ուզում էր իր աղջիկ-պարոնի գումարը շարժել Օսանի համար, սակայն Թշուառ աղջիկը կանգնած տեղը մեռելի գոյն էր ստացել։ Աչքերն արտասուքով լիքն էին։ Եւ եթէ նա առաջուց իմանար, որ իրան այդ էր սպասում խոհանոցում, նա ամենևին չէր գնալ այնտեղ։ Աղքատ։ Իրան ինչն է աղքատ։ Աղքատները նրանք են՝ որ շորերը պատռտած ու շատ անգամ էլ հարբած թաւլառում են փողոցներում և ողորմութիւն խնդրում. իսկ իր մայրը՝ ա՛շ խ ա տ ո ւ մ է։

— Բան չկայ, սէտք է առած օձիքը։ Աղքատին տալուց այդ հազար անգամ լաւ է, վճռեց տիկինը։ — Դինն ինչ է։

— Ընդամենը քսանուհինգ կոպէկ է ասում, աղջիկ-պարոն։ Եւ նա դրանով էլ ուրախ է, միայն թէ կոպէկ ստանար...։ Դէ լաւ է, լաւ է, լաց մի լինիր, դիմեց տնտեսուհին Օսանին, — քո մասին հօ վատ բան չասացի։ Ջտասլիր ձեռքը համբուրիր, կարածդ օձիքն առնում է։

Սակայն Օսանը չշարժուեց տեղից. նա կատաղած դայլի նման նայում էր իր շրջապատողներին։ Օսանը սաստիկ խորը կերպով վիրաւորուել էր թէ իր և թէ մօրը համար։

— Չի ուզիլ, լաւ է, ձեռք պահել հարկաւոր չէ. ահա, տուր իրան այս երեսուն կոպէկը, ասաց տնտեսուհուն աղջիկ-պարոնն ու դուրս գնաց։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, Օսանիկ ջան, Աստուած վարձատրեց քո աշխատանքը՝ — համ այն ստացար, ինչ որ օձիքի

Համար էիր ուզում, Համ էլ պարգև տուին։

—Չապա ինչո՞ւ համար դու մեզ աղքատ անուանեցիր, շտապով վրաբերեց աղջիկը։ Աղքատ բառը նրա սրբտին շատ էր դիպել։

—Ա՛խ, դու մեծսրտանի։ Տեսնում ես։ Ա՛ռ, լաւ, առ փողը. իմ կողմից ողջունիր մօրդ։

Վերջին խօսքերը համարեա չլսեց Օսանը, նա միայն շտապեց ազատուելու այնտեղից, ուր համբերեց նա այնքա՛ն վիրաւորանքի և տարաւ այնքա՛ն նախատինք։ Այդպէս կոշտութիւնով տուած օգնութիւնը, սաստիկ դիպել էր նրա երեւակայական ինքնասիրութեանը, և միայն այնժամանակ նա ազատ շնչեց, երբ այնտեղից դուրս եկաւ և նայեց փողի վրայ, որ այնպէս ամուր սեղմել էր իր բռի մէջ։ Այժմ նա կարող էր իր բոլոր ուզածները դլուխբերել, ուստի նա նոյն րոպէին մոռացաւ և՛ իր յոդնածութիւնը, և՛ ստացած անարգանքը։

Ձուտո՛վ, շուտով մի մօրը մօտ գնալ։

Ինչպէս նետ սլացաւ նա դաւիթի մէջով ու մրրիկ նման ներս վազեց իրանց սենեակը։

—Ծախեցի, մայրիկ ջան, ծախեցի։ Երեսուն կոպէկ տուին...։ Չե՞ս հաւատում։ Ահա տես, համարիր ինքդ... հիշդ երեսուն կոպէկ է։

Մայրը թէ ծիծաղում է, թէ լաց է լինում։ Եւ իրաւ որ, ինչպէս լաւ աղջիկ ունի ինքը։

—Տանտիկինն ինքն առաւ, բլբլացնում էր Օսանը։ Նա այնպէս մի վե՛հասանձ և լաւ հադնուած էր...։ Բայց ինչպէս զղուելի էր տնտեսուհին. նա մեզ համար ասաց՝ որ մենք աղքատ ենք։ Մայրիկ ջան, չէ՞ որ մենք աղքատ չենք, այնպէս չէ՞։

—Իհարկէ որ, արեւդ սիրեմ... մենք խեղճ ենք, բայց աղքատ չենք, շտապեց մայրը հանգստացնել Օսանին։ Իսկ դու ինչո՞ւ համար շուկայում չծախեցիր. չէ՞ որ դու առաջ ուզում էիր այնտեղ գնալ։

— Ձուկ այսում քիչ էլեն տալիս։ Եօ երկու օր շարունակ նոտած աշխատել էի, բայց նրանք տանը կոպէկից աւելի չտուեցին։ Դիտէս, մայրիկ, ես արդէն գատարկ տուն էի գալի... այնպէս տխուր էի՝ առանց փողի չէի ուզում գալ։ Տանտիրանց դռնից անցնելիս մի քոս ընկաւ նրանց տընտեսուհին։ Պատճեցի թէ տնտեսուհին կառնի, բայց տանտիրուհին ինքն առաւ, և հինգ կոպէկ էլ ընծայ տուեց։ Եօ այդ հինգ կոպէկով ձուկը կառնեմ և ձկնաթէան կըպատարաստեմ։ Չտայ... իսկ այժմ շտապեմ դնամ խանութ...։

— Դեռ մի քիչ Հանգստացիր։ Բաւականին յոգնած ես։

Ո՛չ, ես սմենևին չեմ յոգնել։ Եօ ու դու այսօր օրինաւոր — շաքարով ու հացով թէյ կըխմենք. իսկ յետոյ կերթամ դետեզրը ձուկն առնելու։ Այնտեղ ձուկը թէ նոր բռնուած է լինում, և թէ աժան. մեր մօտի ձկնավաճառները թանկ են տալիս։

Այս ասելով թաշկինակը դրեց դլխին ու դուրս եկաւ. հասնելով խանութին՝ մնաց կանդնած։ Խանութում քանիմի յաճախորդներ կային. նա մի քիչ շունչ առաւ և սեղանատախտին մօտենալով.

— Ինձ մի երեք դրուանքայ հաց տուէք, քառորդ դրուանքայ շաքար և մէկուկէս լոտ էլ թէյ։ Միայն թէ, խնդրում եմ, շուտով, եօ ժամանակ չունիմ, վրատուեց Օսանը։

Խանութպանն աչքի տակով նայեց նրան և սկսեց նրա կողքին կանդնած կնոջ համար քան կշռել։

Օսանը թախանձանքով կրկնեց իր խնդիրքը։

— Դեռ առաջ նրան ճանապարհ դցիր, նա փոքր է, ասաց յաճախորդ կինը։

Խանութպանը ակամայ կշռեց նրա խնդրածները։

— Ինչքան սէտաք է տամ, ծանր կերպով ասաց Օսանը։

— Տատուկինը կոպէկ, պատասխանեց խանութպանը։

Օսանը տուեց նրան ձեռքի քսան կոպէկանոցը, մէկ կոպէկ աւելորդը յետ ստացաւ և ծոի սկսս թուաւ դէպի տուն։

Օրինաւոր, այսինքն շաքարով ու հացով թէյ խմելուց լետոյ, Օսանը վազեց համբարանոց կատուի մօտ, հետն էլ մի կտոր հացի միջուկից տանելով։ Նա սալած էր, ուրեմն ցամաք հացն էլ լաւ կուտէ։ Կատուն պառկած էր, կենդանութեան նշան հազիւ էր ցոյց տալիս, նա կամաց մլաւում էր, իսկ հացի վրայ իսկի չնայեց անգամ։

— Ուզում չես։ Տես մի՛։ Իսկ ես ու մայրս հացով թէյը բաւականութիւնով խմեցինք։ Դէ որ այդպէս է, պառաւիը, քեզ համար ձուկը կրբերեմ։ Կատուներդ հօ ձուկը սիրում էք։

Օսանը տուն եկաւ, վերցրեց հին սակառիկն ու, չնայելով մօր հաւատացնելուն որ ձուկը կարելի է գնել նաև ամեն մի տեղ և ամեն մի ձկնավաճառից, — գնաց գետեղերը։

— Դու լինչ ես մարդու ոտի տակն ընկնում այստեղ. չլինի՛ թէ ուզում էիր ջուրն ընկնել։

Օսանն ուղղուեց և աչքերը վեր բարձրացնելով՝ տեսաւ ձկնորսին իր մօտ կանգնած։

— Ես... ձուկն եմ ուզում... պատասխանեց Օսանը շփոթուած։

— Բայց փող ունի՞ս, հարցրեց ձկնորսը՝ կասկածանքով նայելով այդ փոքրիկ, մլսած և աղքատ-հագնուած աղջկայ վրայ։

— Ունիմ, պատասխանեց Օսանն ու փողը գրպանի մէջ չխչխկացրեց։

— Բաս լաւ է. սակառիկդ տուր լինձ, ձուկը դարսեմ մէջը։

— Իսկ տասը հատի գինն լինչ է. դեռ մի դու լինձ ասա տեսնեմ տասը հատի գինն լինչ է, հարցրեց Օսանը, յետ քաշելով սակառիկը։

— Տուր լինձ սակառիկը, տուր լինձ, թանկ չեմ տալ, լինչքան որ ուրիշներից եմ վերցնում, այնքան էլ քեզանից կառնեմ՝ տասը—երեք կոպէկ։

— Ի՞նչ ես ասում, լի՞նչ ես ասում, վախեցաւ Օսանը,— երեք կոպէկ, — թանկ է. այդ հօ ձեռքով մտնածողներն

են երեք կոպեկով տալիս, իսկ այստեղ, իմ դիտենալովս, աւելի ածան պէտք է լինի...: Այստեղ երկու կոպեկ արժէ տասը հատը:

—Ի՞նչ աչքաբաց գատ է: Է՛հ, քեզանից օգուտ չունիմ. ինչ արած, պէտք է վնասով ծախեմ: Բաց սակառիկդ, բաց:

Օսանը բացեց սակառիկը, իսկ ձկնորսն սկսեց ձկներն գցել մէջը, զոյգ-զոյգ համարելով:

—Դու ինչքան ասացիր. հինգ թէ վեց տասնեակ:

—Ինչլիս է այդ քանը. ես երեք ասացի...:

—Ձատ վերցրու, ձուկն ածան է... հը՞, էլի մի տասն էլ եմ համարում:

—Ինձ համար այդքանն էլ բաւական է, վախեցած պատասխանեց Օսանը: Նա վախենում էր, որ մի գուցէ փողը չբաւականանայ:

—Վերառ, էլի վերառ. աեսնում ես ինչպէս խըլպըլտում է, ինքն է ուզում սակառիկիդ մէջը մտնել, ասաց ձկնորս ու մի տասն էլ համարեց:

Այս անգամ չէ չատաց Օսանը, մխիթարուելով այն բանով, որ տանը ամեն ինչ առած է, և բացի դրանից երեք կոպէկ էլի մնում է. իսկ վաղը մայրիկն էլ իր կալի համար ստանալու է. ասել է այնպէս մի առանձին փողի հարկաւորութիւն չի լինելու:

—Դէ հիմա դրամազլուխը տուր տեսնեմ, կատակով ասաց ձկնորսը, գոգնոցով ձեռքերը սրբելով:

Օսանը գրպանից երկու հինգ կոպէկանոց հանեց ու տուեց նրան:

— Թող այդպէս լինի, ասաց ձկնորսը, փողը ձեռքի մէջ վեր-վեր գցելով:

Օսանը վախեցաւ:

—Ի՞նչպէս թէ՝ թող այդպէս լինի: Չէ՞ որ ես քեզ երկու հինգ կոպէկանոց տուի...:

—Այո՛, երկու:

—Իսկ ձուկը որքան արժէ։

Եւ նա սկսեց ձկի գինը հաշուել մատների վրայ։

—Է՛ դու էլ։ Տուածդ ձուկն ընդամենն արժէ ութ կոպէկ, իսկ ես քեզ տուեցի երկու հինգ կոպէկանոց, այսինքն տասը կոպէկ։

—Դու աւելորդը չետ ես ուզում, Հա՞։

—Իհարկէ. պէտք է ինձ երկու կոպէկ չետ տաս։

—Ա՛ռ, մա՛. ես կատակ արեցի։ Ես կարծեցի դու հաշուել չգիտես, ուզեցի փորձել։ Ոչինչ, չշփոթուեցիր, շատախօսութիւնդ զուր չանցաւ։

Օսանը ձկնորսի ձեռքից առաւ երկու կոպէկն ու վաղեց դէպի տուն։

«Փառք Աստծուն, ամեն ինչ գնել եմ։ Կերթամ տուն, երկու տասնեակից ձկնաթան կըպատրաստեմ, իսկ մինը կըպահեմ վաղուան համար, ինքն իրան մտմտում էր Օսանը ճանապարհին։

Դեռ կամրջին չհասած՝ Օսանը մի գիւղացի տեսաւ տեխուրը ձեռքին։ Նա խաշած թոռքի կտորներ էր ծախում քաշով։ Օսանը մնաց կանգնած տարակուսութեան մէջ։

«Ա՛յ ինչ կուտէր ուրախութիւնով իմ հիւանդ կատուն, մտածեց նա։—Կատուները սիրում են սմենից աւելի միս, կամ՝ բոլոր մէկ է, թոռք։ Արդեօք առնե՞մ։ Ես դեռ երեք կոպէկ ունեմ...»։

Էլ երկար չմտածեց, թոռքից գնեց և իրան բոլորովին երջանիկ զգալով՝ շարունակեց ճանապարհը։ Երբեմն նա կանգ էր առնում, բայց անում թուղթը, հոտ քաշում, բայց չկարողանալով իրան պահել, մի քիչ կծում էր։ Երկար ժամանակ էր որ նա միս չէր կերել, այդ պատճառով շատ դժուար էր նրա համար բոլորն էլ ուտելու փորձութեան դէմ կռուիլը. սակայն երբ յիշում էր հիւանդ կատուին, կարողանում էր զսպել և հեռու պահել իրան հրապուրանքից։

Օսանը՝ համարեա սառած, տուն վերադառնալուն պէս խոհանոցից ձայն տուեց.

— Մայրիկ, ես եկայ: Յետոյ սակառիկը սեղանի վրայ դրեց և վազեց համբարանոց:

— Մի տես, մի տես թէ քեզ համար ինչ եմ բերել, ասաց նա բանալով թուղթը և կատուի դնչին մօտեցրեց թոքի կտորը: — Ինչ մնայ որ ինքս ուտէի. միայն մտածեցի, որ աւելի լաւ կլինի քեզ համար թողնեմ: Դէ քեզուքեղ հաւաքիր. մենք իրար հետ կըխաղանք, կըվազվզենք...:

Բայց կատուն չնայեց անգամ:

— Դէ կեր, կեր, համոզում էր կատուին Օսանը:

Ո՛չ, կատուին չհրապուրեց պատրաստած ճաշը. նա հոգիւ էր շնչում:

— Զարմանալի է որ թոք էլ չի ուտում, քթի տակ խօսեց Օսանը, և ենթադրելով որ կատուն իր բաժինը յետոյ էլ կուտէ, վերադարձաւ տուն:

Ո՛րպիսի հանգիստաւոր կերպով էր նա հիւթասիրում մօրը ձկնաթանով, ո՛րպիսի վառահեղութիւնով էր ածում ձկնաթանից ափսէի մէջ, ընտրելով նրա համար ամենախոշոր ձուկը, որովհետև «սա» աւելի գէր ու աւելի համեղ է: Նրա շաղակրատանքներին ու հոգայողութիւններին վերջ չկար:

— Եւ եթէ ամենայն օր այսպէս ճաշէինք, մայր իմ, ինչ լաւ կըլինէր: Երբեմն քո վրդով, երբեմն էլ իմ...: Միայն ծախսերը դժուար է, ա՛խ, ինչպէս դժուար է: Ինչ են տալիս: Ես երկու օր շարունակ աշխատեցի, բայց մենք կուշտ ենք միայն մէկ օր: Ցնտեսուհու մօտ հօ ամենևին չեմ գնալ, ես բարկացած եմ նրա վրայ: Մենք աղքատ չենք: Աւելի լաւն այն է շատ ժամ տամ վաճառողներին, քան թէ թանկ՝ ու նրան: Իսկ դեռ վրայ այնպէս լաւ է որ մայր իմ, անդադար անցուդարձ են անում շոգենաւեր, նաւակներ...: Մէկ օր էլ ես ու դու կըզբօսնենք նաւակով...:

—Սիրուն շատախօսս, ես բոլորովին կշտացայ, վառք Աստծուն։ Չնորհակալ եմ քեզանից էլ, աղջիկս, ճաշիդ համար՝ քո սեպհական ճաշիդ համար, վրաբերեց մայրն ղպացմունքով։

Օսանը վաթսաթուեց մօր վզովն ու համբոյրներով ծածկեց նրա երեսը։ Այդ մէջօդին, իրաւ որ, նա երջանիկ էր, թէև էլի քիչումիչ մխան էին դալիս այն օրուան իր քաշած անյաջողութիւնները ու նեղութիւնները։

Իրիգնադէմ Օսանը դնաց համբարանոց։ Կատուն սատկել էր։ Չորացած թոքի կտորոտանքը թափուած էին նրա շուրջը. ոչ մի բան չօգնեց նրան՝ ոչ քնելու համար հոգացողութիւնով պատրաստած տեղաշորը, ոչ թոքը։ Եւ ուրեմն միայն քաղցածութիւնը չէր դրա պատճառը, այլ ինչպէս երևում է, խեղճը դժուար հիւանդ էր եղել։

Օսանը շատ վշտացաւ, բայց ձեռքից ինչ կըդար. կատուի լեշը համբարանոցից դուրս տարաւ, մի առանձին տեղ խորը թաղեց գետնում, և երբ վերադարձաւ տուն, արդէն բոլորովին մութն ընկել էր։

—Նաֆթը սրտեղ ես դրել, Օսան, հարցրեց նրան մայրը։ Ինչքան որոնեցի, որոնեցի, բայց ոչ մի տեղ չգտայ։

Օսանի սրտին շատ ցաւ տուեց։ Նաֆթը։ Բայց նա բոլորովին մոռացել էր այդ մասին։ Այժմ ինչ պէտք էր արած։ Աղջիկը՝ լայն-լայն բացած աչքերով շեմքում մնաց կանգնած։

—Ջուտ բեր ինձ տուր։ Պէտք է լամպարը կարդի բերեմ ու շուտ դործի նստեմ։ Ինչ ես սուս կտցել, չլինի թէ մոռացել ես, հարցրեց անհանգստութիւնով մայրը։

—Այո, մոռացել եմ, ասաց Օսանը հազիւ լսելի ձայնով։

—Չէմա ես ինչ անեմ։ Ա՛խ, Օսանիկ ջան, Օսանիկ. չէ՞ որ վաղը պէտք է անպատճառ տանեմ ձեռքիս կարը. այսօր էլ սենեակի վարձն էին պահանջում։

Օսանը լուռ էր։ Այդ ցաւին օդնելն սրդէն նրա ուժից

շատ վեր էր։ Մայրը տարակուսութեան մէջ թափառեց սենեակի մէկ անկիւնից միւս անկիւնն ու վերջապէս կանգառաւ աղջկայ առաջին։

— Օսանիկ ջան, բան չկայ, Հոգիս, մի՛ տխրիր, միայն այն է որ պէտք է գնաս խանութից բերես, ասաց մայրն անվճռորոշաբար։

— Ի՞նչպէս թէ խանութից. ախր ձեռքիս փողը բոլորն էլ գնացել է։

— Ի՞նչ արած, պարտք պէտք է խնդրած...։

— Ա՛խ, մայր իմ...։

Աղջկայ այդ ձայնի մէջ այնքա՜ն աղաչանք կար, այնքա՜ն ամենադառն յուշաբերութիւն, որ մայրը միանգամից հասկացաւ թէ որքան դժուար է այժմ նրա համար խանութ գնալը, ուստի թաշկինակը ծածկեց ու լինքը գնաց նաֆթի։

Մայրը երբ վերադարձաւ, սենեակում ամեն ինչ հանդարտ էր. միայն երեխայական միահաւասար շնչառութեան ձայն էր լսվում։

— Օսան, ձայնեց նա աղջկան։ Բայց պատասխան չստացաւ։

— Երևի քնել է, մտածեց մայրը, և ձեռքերը պահելով վառած լուցկու առաջ, որ չհանգչէ, զգուշութիւնով մօտեցաւ անկողնակալին։

Օսանը քնած էր քաղցր, անդորր քնով։

— Քնի՛ր, իմ թանկագին, իմ անգի՛ն աղջիկս, շշնջեց մայրը և խոնարհեց աղջկայ վրայ։ Այսօր դու շատ տրտուեցիր՝ կոպէկների համար քաշ գալով։ Դու միանգամից փորձեցիր քո վաքրիկ, առաջին վաստակի դ՝ և՛ քաղցրութիւնը, և՛ դառնութիւնը...։

Փոխադր. Լ. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ։

ԳԵՐԵԶՄԱՆ

Երեմիկ անցնում նուրբ հովիկը
Գերեզմանի վերայից
Եւ չքչքում չինչ առուակը՝
Միշտ հոսելով նրա մօտից։

Ուռին ծռուած ու լալական
Լողում ջրի երեսին,
Բանում խոտը շքեղանման
Ձիլմաքարի կողքերին։

Թռչնիկները ծլվլալով՝
Նայա բոլորտիքը հաւաքւում,
Ծիծեռնակն իր նուագներով՝
Ուռիի մէջ թաքնվում։

Էլ չեմ տեսնիլ ես այդ պատիկ
Գերեզմանում թաղուածին,
Էլ չեմ տեսնիլ վաղամեռիկ
Այդ կեանքն անոյշ ու անգին։

Եւ այդ տեղն լինճ համար ունի
Յիշատակներ տրտմական. —
Ա՜խ, դա մեռած իմ սիրելի
Մանկութեանս է դերեզման։

ԼԵՒՈՆՑ։

Փարիզ։

Ը.

ՊԱՏՈՒԱՍՏԵԼՈՒ.

Պատուաստելով (մատ դնել, զալամ անել) ծառերի բազմացնելու ձևը այգեզործութեան արհեստի մէջ մարդու հնարած ամենամեծ դիւտն է և միանգամայն հրաշալին։

Մարդս հեշտութիւնով ձեռք բերաւ թէ սերմով, թէ կտրոնով և թէ տաշտաթաղ անելով ծառերը բազմացնելու եղանակները, բնութեան մէջ յաճախ պատահելով նրանց, բայց պատուաստելը, այն է՝ մի ծառի հաշուով միւսին ապրեցնելը ոչ մի տեղ չէր կարող տեսնել և միայն նրա հարստարութեանը պիտի վերագրել։

37. Սակայն ամեն ծառ չէ կարող նոյն յաջողութիւնով մի ուրիշը սնուցանել. ծառհիւմի տարբերութիւնը, և աճելութեան եղանակը մեծ դեր են խաղում պատուաստելու մէջ։ Փոխադարձ է որ մի ցեղի պատկանող բոլոր տեսակները, ասենք թէ տանձենիները, մշակուած թէ անմշակ մէկմէկու վրայ լաւ են բռնում քան մի ուրիշ ցեղի. թէև կան այնպիսիք, որ լաւ պատուաստակալ են օտար ցեղի համար, օրինակ, սերկևիլին՝ տանձենու համար,

նշենին՝ ղեղձենու և ընդհակառակն: Ընդհանրապէս սերմ ունեցողները մէկը միւսի վրայ լաւ են բսնում, այն ինչ կորիղաւորները բացառութիւն են կազմում:

38. Պ ա տ ո ւ ա ս տ ե լ ո ւ ժ ա մ ա ն ա կ ը: Ծառերը պատուաստում են թէ աշնանը և թէ գարնանը քանի որ ծառհիւթը դեռ շարժողութեան մէջ է: Աշնան պատուաստածը այս առաւելութիւնն ունի, որ ծառը քիչ է յոգնում, և եթէ պատուաստը չբռնեց, գարնանը նորից կարելի է պատուաստել. բայց այս վտանգը կայ, որ ձմեռը ցուրտ տեղերում թէ պատուաստը և թէ պատուաստակալը միանգամայն կարող են վչանալ:

Պ ա տ ո ւ ա ս տ ը (մատ, ղալամ) առում ենք ծառի այն կտրոնին, որ ծառայում է պատուաստելու համար, իսկ պ ա տ ո ւ ա ս տ ա կ ա լ ը՝ որի վրայ օտար շիւը պատուաստում ենք:

39. Պ ա տ ո ւ ա ս տ ե լ ո ւ ը ն դ հ ա ն ո ւ ր պ ա յ մ ա ն ն ե ր ն ե ն՝ ա. Ընտրել պատուաստելու նախընթաց տարուան այն շիւղերից, որոնք գտնվում են ճիւղերի մէջտեղը, ջոկելով աւելի զուարթը և լաւ հասածը: բ. Պատուաստացուն առելութեան կողմից նուազ պիտի լինի քան պատուաստակալը, ապա թէ ոչ բաւարար հիւթ չընդունելով շուտով կըչորանայ. դրա համար էլ լաւ է պատուաստացուն մի ամիս առաջ կտրել և հողի մէջ թաղել բոլորովին, որով առելութիւնն առաջ չի դնալ, այնինչ պատուաստակալը մի ամսով առաջ կընկնի: գ. Պատուաստը պիտի դնել պատուաստակալի արևելեան կողմից, ուր ծառհիւթը աւելի առատ է հասնում: դ. Պատուաստակալն ու պատուաստը այնպէս կարել, որ կաշին չճեղքուի կամ չվիրաւորուի: ե. Պատուաստակալը դնելուց յետոյ կաւացեխով վերքը լաւ պիտի ծածկել, որ անձրև կամ որդ չմտնէ ներսը: զ. Պատուաստը առաջին 15 օրը ծածկած պահել արևից, թղթէ վարսակ դնելով գլխին, որ միևնոյն ժա-

մանակ որդներից և թռչուններից ևս ազատած կըլինին կոկոնները։ Է. Որպէսզի քամուց և թռչունների վրան նըստելուց տեղահան չլինի, լաւ է մի շրջանակաձև ձողիկ ամրացնել պատուաստակալի վերևից և նրանից կապել պատուաստը։ ը. Պէտք է հսկել պատուաստակալի վրայ դուրս եկած բողբոջները վիչայնելով, որ ծառի հիւթը չծծեն իւնաս պատուաստի։

Պ ա տ ո ւ ա ս տ ի ձ և ե ր ը շատ են. մենք նրանցից մէջ կըբերենք աւելի դործածականները։

40. Հ ա ս ա ր ա կ պ ա տ ո ւ ա ս տ ը, որ ամենահլին և աւելի տարածուածն է. այդ ձևի համար 3—4 աչքերով մի պատուաստացու են ընտրում և երրորդ աչքից քիչ ներքև սուր դանակով մինչև ծայրը շեղադիր տաշում երկու կողմից, այնպէս որ նա սեպի կերպարանք է առնում, բայց մի կողմն աւելի լայն պահելով քան միւսը։ Պատուաստակալի գլուխը սղոցով ուղիղ կտրում են և մէջտեղից դէպի ներքև յօտացով ճղում մի վերշոլաչափ, նախ կաշին խաղելով, որ չվիչանայ։ Այդ ճեղքի մէջ մտցնում են պատուաստը՝ լայն կողքը դուրսը պահելով, իսկ նեղը՝ ներս. վերջը կաւացեխով ծածկում են վէրքերը, մամուռով պատուաստի շուրջը պատում և թոկով կապում։



Նկար Հասարակ պատուաստի։

Փոխանակ մի պատուաստի, լաւ է ճեղքի երկու կողմից երկուսը դնել, որ եթէ մէկը չբռնեց, միւսը դուցէ յաջողի։

41. Պ ս ա կ ա ձ և պ ա տ ո ւ ա ս տ։ Այս ձևի համար հորիզոնական կերպով կտրում են պատուաստակալի գլուխը կամ թէ չէ հաստ ճիւղերը և փոխանակ նրանց ներքև մէջտեղից ճեղքելու, միայն կաշին են մաշկում առանց

վերցնելու ծառի վրայից և նրա տակը մտցնում պատուաստացուն: Այդ պատուաստացուի երլրորդ կոկոնի տակից նախ հոլիզոնական ձևով $^3/_4$ մասը կտրում են և ապա դէպի ներքև սրնգաձև տաշում, այնպէս որ կաշու տակ մտցնելով նա նստում է պատուաստակալի վրայ: Այս ձևով մէկը միւսից մի վերշոկ հեռի՝ կարելի է մի քանի պատուաստներ տեղաւորել, որով պսակի ձև է առնում նա: Պսակաձևներն աւելի լաւ են բռնում քան հասարակները:



Նկար պսակաձև պատուաստի:

42. Անդրիականի մէջ թէ պատուաստակալը և թէ պատուաստացուն միևնոյն հաստութիւնը պիտի ունենան, այդ կանոն պայմանն է: Այդ ձևի համար երեք աչք ունեցող կտրոնի երկրորդ կոկոնի տակից երկար շեղով տաշում են մինչև ծայրը և մէջտեղից ճղում մինչև կէսը. նոյնը անում են և պատուաստակալի վրայ միայն հակառակ կողմից, այնպէս որ երկու շեղաղիը կողմերը մէկմէկու վրայ են: Այս ձև պատուաստը շատ առաւելութիւններ ունի առաջիններից, բայց դժբախտաբար դժուար է ամեն անգամ միևնոյն հաստութիւնով պատուաստակալ գտնել:



Նկար Անդրիական պատուաստի:

43. Աչքապատուաստ: Բայլ կտրոնը կայ և աչքով կամ կոկոնով պատուաստել: Դրա համար օգոստոսին պոկում են շիւից մի լաւ աչք, որը վերցրած իր

չորս կողմի կաշով և տերևով. տերևը պոկում են, կաթը միայն թողնում, որ կալելի լինի ձեռով բռնել աչքը: Պատուաստակալի կողքի վրայ նախ T ձևով խազում են կաշին և բարձրացնելով աչքապատուաստը դնում տակը և լաւ կապում: Երբ բռնում է, յաջորդ տարին պատուաստած տեղից քիչ վերը կտրում են պատուաստակալը: Այս ձևը լաւ է մատաղ վայրի ծառերի վրայ կատարել, որ երբ չբռնեն, պարտնանը կարելի է անզղիական պատուաստը փորձել, այդ էլ չյաջողուեց Հասարակը կամ պսակաձևը:

Թ.

ԾԱՌԵՐԻ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ.

Ծառերի ընդհանուր խնամքները են նրանց պարարտացնելը, յօրդելը, տակնելը փորելը և ջրելը:

44. Պատուաստելու համար ծառերի տակը բաւականին մեծ տարածութիւնով փորում են աշնանը կամ գարնան սկզբին և դոմանոցի աղբ վառում տակը:

Յարդելը կայանում է նրա մէջ, երբ գարնանը ամբողջ այդին կովանոցի կամ ախոռատան աղբով ծածկում են. այդ աղբի մէջ եղած յարդը պահպանում է հողի թարմութիւնը և չէ թողնում որ չորանայ ներսինը և անմատչելի դառնայ օդին ու խոնաւութեան: Նա միևնոյն ժամանակ լաւ պարարտացուցիչ նիւթ է ծառերի համար:

Փորել տարին մի անգամ ամբողջ այդին անշուշտ հարկաւոր է. այդ փորելուց յետոյ է որ կատարվում է յարդելը:

Ջրելը լինում է երաշտներին. դրա համար ծառի շուրջը մօտ քառորդ արշին խոր և երկու քառակուսի

արշին լայն փոս են բացանում և ջուրը ներս թողնում։ Լաւ է միանգամայն առատ ջրել, քան թէ մի քանի անգամ քիչ-քիչ, ինչու որ շուտ-շուտ և թեթև ջրելով ծառի արմատները փոխանակ խորը իջնելու, երեսն են դուրս գալիս նոր-նոր բողբոջների ձևով։

Ընդհանուր խնամքների մէջ պիտի հաշուել և ծառերի չոր մասերի յօտելը։

45. Պտղին տալիք խնամատարութիւնները շատ են, նրանցից միայն կը յիշենք հետևեալները.

ա. Երբ պտուղը չափից դուրս շատ է, ծառը կարող է ուժաթափ լինել և այնուհետև քիչ պտուղ տալ, ուստի երբ պտուղը կազմակերպվում է, նրանցից, որոնք խոնաւած են, պիտի պակասեցնել, դրանով մնացածները աւելի գեղեցիկ տեսք և մեծութիւն են ստանում։

բ. Պտուղը որպնակերութիւնից ազատ պահելու համար նրանց կպած տերևները պոկում են, բայց բոլորովին բաց չթողնելով պտուղը, որ արևը խանձէ։ Տերևը հովանու պէս պիտի պաշտպանէ նրանց։

գ. Աչքի առաջ ունենալով, որ տաքութիւնը շուտ է հասցնում պտուղը, ճղներին արևահայեաց դիրք են տալիս և ծառի տակ սև նիւթերով ինչպէս ածխահողով և սևահողով ծածկում։

46. Պ տ ղ ի հ ա ս ո ւ ն ո ւ թ ի ւ ն ը դիտենալ և իր ժամանակին քաղել մեծ վարժութիւն և զգուշութիւն է հարկաւոր. շատ խակ քաղելով նա կնահատում է, դունատվում և երբէք չէ հասունանում, իսկ շատ հասած քաղելով ընդհակառակը փափկանում է և փտում։

Գործնական հանդամարիքը այս է. այն պտուղները, որոնք բնականաբար դիմացկան չեն, ինչպէս են կեռասը, բալենի, թուզը, դեղձը, դամոնը, ամարալին տանձերի ու խնձորի տեսակները պէտք է պահել մինչև կատարեալ հասունութիւնը, երբ սկսում են մի թեթև շաղահարուելուց

լաթուկ տալ։ Իսկ պահելու պտուղները, ինչպէս են ձմեռնատանձերը, խնձորները և սերկևիլը կատարեալ հասունութիւնից քիչ առաջ պիտի քաղել, երբ շողշողուն կերպարանք են առած։

47. Պ տ ղ ա ք ա ղ ը լինում է պարզ օր, առաւօտեան ցօղն անցնելուց յետոյ մինչև երեկոյեան զով ընկնելը։ Պտուղները քաղում են մէկ-մէկ իրանց կոթով, զգուշանալով նրանց չվիրաւորել։ Հասարակ պտուղների համար քառանկիւնի մեծ կտաւ են բռնում ծառի տակը կամ չորս ցցերի վրայ հաստատում և ճղները ոտով կամ ձեռով թափահարում։

48. Պ տ ղ ա տ ո ւ ն։ Պահելու պտուղների համար այնպիսի տեղ պիտի ընտրել, որ արգելք լինի պտղի շուտ հասունութեան, որին նպաստում է լոյսը, ջերմութիւնը և օդը. ուրեմն հասկանալի է որ պտղատունը այդ երեք տարրերից եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծաւ մասամբ հեռի պիտի պահել։ Իբրև ընտիր պտղատուն կարող են ծառայել չոր և մի քանի օդից աղատ մառանները և թէ գետնից բարձր շինած նոյն յարմարութիւններն ունեցող շէնքերը։

Պտղատան ներսը պատերի երեսին տախտակէ դարիքներ փետի շինել մէկմէկուց կէս գազ բարձր, երեսին յարդ փռել ու վրան շարել պտուղները — տանձը կոթը վեր, իսկ խնձորը՝ ներքև։ Պտուղները մէկմէկու պիտի չդիպչեն, առաջին շարքը լաւ է դուռ ու պատուհան բաց թողել քամի տայ, որ քիչ կենդանանան, իսկ յետոյ ամուր փակելով՝ միայն ժամանակ-ժամանակ բանալ չոր ու տաք եղանակներին, որ ներսի օդը փոխուի։

Ցրտահարութիւնից պաշտպանելու համար կամ թրղթով պիտի ծածկել պտուղները կամ կրակակալ դնել պտղատունը տաքացնել։ Շուտ-շուտ ակը պիտի տալ պտուղներին, փտողները իսկոյն հեռացնել, որ միւսներին չանցնի հիւանդութիւնը։

Պտուղները բացի այդ ձևից՝ պահում են և կարասներում, կճոպներում, բանդակ արած (հաւաքած ցանցի մէջ) մոխրի, աւազի՝ կամ թէ սղոցուածքի ու թեփի մէջ,

Ինչ տեղ էլ, ինչպէս էլ որ պահելու չլինինք պտուղները, պէտք է նրանց հեռի պահել ցրտից, խոնաւութիւնից, միջատներից և փոփոխական օդից:

Խաղողը պահելու համար նախ ճթերի միջից հեռացնում են թէ փտած խաղողները և թէ մէկմէկու սղմուածները, որոնք մնալով ենթակայ են լինում փտութեան: Այդ ճթերն արևի տակ առժամանակ փռում են որ չմշկին և ապա թղթէ քսակների մէջ կախում են կոթից պտղատանը կամ փռում յարդի վրայ:

Եթէ եղանակը ներում է այգեկութից առաջ թղթէ կամ կտնավոյէ քսակների մէջ են դնում ճթերն ու վազի վրայ այնպէս թողնում մինչև ցրտերի ընկնելը և ապա փոխադրում են պտղատունը:

Ժ.

ԾԱՌԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԴԱՐՄԱՆԸ.

Ծառերը ինչպէս և բոլոր բոյսերը ենթակայ են զանազան հիւանդութիւնների, ինչպէս երաշտից՝ խանձուելուն, սառնամանիքից՝ ճաքճքելուն, վատ ու մաշուած հողից՝ տերևի վազահաս թափուելուն, անզգոյշ ու անկանոն յօտելուց՝ ճիւղերի չորացման և ծառհիւթի նուազման, խոնաւութիւնից՝ բորբոսով ծածկուելուն. բացի այս նրանք բազմաթիւ թշնամիներ ունին միջատների մէջ տարբեր-տարբեր ճաշակներով, — նրանցից միքանիսը արմատներն են կրծում, միւսները կեղևը, երրորդը տերևը, չորրորդը կոկոնն ու բողբոջը, իսկ աւելի զարգացած ճաշակ ունեցողները պտուղը:

49. Ծառի կեղևը երբ ճաքճքվում է ցրտից, կարկուտից կամ վերասորուելուց, օդի, անձրևի և խոնաւութեան ներգործութեան տակ հետզհետէ վերքը դէպի ծառի սիրտն է անցնում և լայնանալով փտում ու փչանում է, որից և չորանում ընկնում է նա:

Ծառի այդ հիւանդութեան պարմանն է վերասուլուաճ մասը լաւ կտրել վերցնել և վրան սպեղանի դնել, Սպեղանին պիտի պատրաստել զաճից, քակորից (աթար), մոխրից և աւազից. երեք ֆունտ քակորին պիտի վերցնել մի ֆունտ զաճ, մէկուկէս ֆունտ փայտի մոխիր և քառորդ ֆունտ աւազ. այս վերջինները լաւ կրճաճ, մանրացրած պիտի քակորի հետ խառնել և խմոր պատրաստելով ծեփել վերքը:

50. Երկաթատև հրաշտին ծառերի ելակներն սկսում են կուչ գալ, ծառհիւմքը կորցնում է իր ջրալի տեղը և բարձրանալով այլևս առաջ չէ գնում, որից և ճղները սկսում են չորանալ, ինչպէս ծիրանի և դամոնի ծառերը: Այդ հարուածից ազատելու համար պէտք է բնի չորս կողմը ծածկել տախտակներով և մեծ ճիւղերը քակորի և կաւի շաղախով պատել: Լաւ է նոյնպէս կրաջրով ծառի սպիտակացնելը, որով նա զով է մնում, ինչպէս հեմակեղէն հագած մարդը ամառ ժամանակ:

51. Ծառերին վնասակար միջատները բազմաթիւ են, մենք կը խօսենք միայն դրանց դէմն առնելու միջոցների մասին:

Պտղատու ծառերի մէջ մանաւանդ խնձորենուն ու տանձենուն ամենից շատ վնասում են տեսակ-տեսակ թրթուրները, որոնք խժռում են ծառի տերևն ու կոկոնը և շատերն էլ պտուղը ոչնչացնում: Այդ թրթուրների կեանքը թէև կարճ են, բայց իրանք բազմանալով բազմաթիւ լինելով զգալի վնասներ են տալիս: Աշնանը էգ թիթեռը հարիւրաւոր ձուաներ է դնում, որոնցից դար-

նանը մանրիկ որդեր են դուրս գալիս և երեք չորս անգամ փոխելով իրանց մորթը, շերամի որդի նման բերանները ցից բարակ թել են դուրս թողնում, ոստայն կազմում և մէջը փակվում սնատենաւորվում: Մի քանի օրից նրանք դուրս են գալիս իրանց պահարանից ոչ թէ առաջուայ պէս թրտուրի ձևով, այլ թիթեռի, որոնց տեսնելուց շատ անմեղ էակներ ենք կարծում, դրանց էգերը բուսականին ձուաններ թողնելով, իրանք մեռնում են, իսկ ձուաններից յաջորդ գարնանը նոր որդեր—թիթեռներ են առաջ գալիս ու ծառի տերևը խժռելով շարունակում նախորդների արշաւանքը:

Այդ թիթեռները վերացնելու յարմար ժամանակը յատնիս ամիսն է, երբ քաշվում են իրանց ոստայնի մէջ և սնատենաւորվում: Պէտք է այդ ոստայները քանդել և կրակ տալ: Իսկ թիթեռները վերացնելու համար օդոտոսին ծառի մօտերը լաւ կրակ պիտի վառել երեկոյեան, որի վրայ են հաւաքվում և մեծ բազմութիւնով կոտորվում:

52. Բացի թիթեռներից, մ ը ջ ի ւ ն ն ե ր ը, բ ու ռ ը ր (շանաճանճ), վ ա յ տ ո ջ ի լ ն ե ր ը, ծ ա ե ր ը և կրծող կենդանիները իրանց բուժին չարիքն են հասցնում: Բուռերի և մրջիւնների դէմն առնելու համար լաւ է ամանները շաքարաջուր ածել և տեղ-տեղ կախել, վայտոջիլները միշտ պատռպատրան են դնում ճաքճքած կեղևի մէջ, պէտք է երկաթէ քերիչով մաշկել կնճիռները և հարթել կամ կոշտ խոզանակով մաքրել: Կրաջուրը կամ մոխրաջուրը ևս զօրաւոր դեղեր են մի քանի միջատների դէմ, միայն պէտք է պտուղը քաղելուց յետոյ կատարել այդ:

Փտելին վախցնելու լաւ միջոցն է երբեմն-երբեմն հրացան արձակելը, իսկ կրծողների դէմն առնելու համար որոգայթներ լարելը:

53. Մ ե ր օ ղ ն ա կ ա ն ն ե ր ը: Փառերի այս անթիւ երևելի և աներևոյթ թշնամիների դէմ կռուելու

համար մարդուս դօրաւոր օգնականներն են զետնի տակ— խ ո ւ ր դ ը, որ լափում է իր ստորերկրեայ պալատան անցքերում հանդիպող միջատներին. դրսում ո գ ն ի ն, այգու այդ անվարձ պահապանը, դ ո ր տ ը, խ լ ե զ ը, թռչուններից ծ ի ծ ե ռ ն ա կ ը, ա ր ի կ ը, ա ղ ա ւ ի կ ը, փ ա յ տ փ ո ր ը և ուրիշ շատերը, իսկ ղիշեր ժամանակ բ ո ւ ն (պայզուշը) ու է ղ է լ կ ը։

Թէ պէտք է սիրենք, պէտք է մեր հովանաւորութեան տակ առնենք մեր այդ օգնականներին, որոնց հաւաճում, արհամարհում է տղէտ ամբոխը, հասկանալի է։ Առանց թռչունների, առանց միջատներին ջարդող կենդանիների օգնութեան, անհնարին կըլինէր մարդին յաղթող դուրս գալ այդ մանրիկ էակների հետ պատերազմի մէջ և տերևով ու պտուղով զարդարուած ծառի զրաւիչ տեսքին պաժանանալ։

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ։

ՏԵՂԱՓՈՒՈՒԵԼՈՒ ՋԱՆԱՉԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ։





ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպագրական նոր մեքենայ. Ֆիլադելֆիայում մեքենայական գործարանի վերատեսուչ Ֆէյսաէրը մի մեքենայ է պատրաստել, որը՝ համ ալրում է, համ տպածը դարսում, համ ալրակում, համ կարում, համ էլ կապմում: 36 երեսանոց օրագոյց պատրաստելու համար Հարկաւորուեց միայն մի վայրկեան միջոց: Այդ մեքենան մէկ օրուայ մէջ կարող է մօտ 10,000 ալրակ (քրօշիւր) պատրաստել, իւրաքանչիւրը 32 երեսանոց:

Ծխնեռնակի թռչելու արգելքը. Պաւիա քաղաքից երկու ծխնեռնակ են բերում Միլան, ուր մնացած են լինում գրասենց Ճառերը: Ծխնեռնակներն էլի յետ թռչում գնում են Միլան 13 րոպէից յետոյ. որ ասել է՝ մի ժամուայ մէջ 130 վերստ թռչել:

Մսից վրայ. Ֆրանսիայում հիւանդներին կերակրելու համար հետևեալ միջոցն են գործադրում— միսն ազում են, մետաքսից շինած մաղից անցկացնում, և այդ ստացած Ճերմակ փոշուց որոշեալ չափով հիւանդների համար կերակուր պատրաստում:

Ապագայ. Սովորաբար աղօրիքները չարժելու համար զոր են դնում ջուր, հոգմ և գոլորշի: Սակայն ամեն տեղ չարմար չէ ջրատարը, որովհետև դրա համար հարկաւոր է ջրի առաջքը կտրել, որի համար մի նշանաւոր տարատաձուխիւնով գետին է գործադրւում: Գոլորշու օգնութիւնով չարժուող աղօրիքի համար էլ շատ վաւելիք է գնում: Ամենահասարակ և ուժան աղօրիքը հողմաղացն է: Հողմն էլ երբեմն է, ձրի է, սակայն դա էլ կամակոր է: Օրինակ չի կարող հողմատացը բանել հողմ չեղած միջոցին, կամ երբ վոխթորիկ է: Խաղաղ եղանակին հողմն անգործ է լինում—այժը չի պատում աղօրիքը պարապեցնելու, իսկ ընդհակառակ՝ վոխթորիկ ժամանակ նա կարող է բոլորովին կոտրատել աղօրիքի թևերը: Այդ անյարմարութիւններից ազատ մնալու համար ամերիկացիք նորերումս հրշեռաշարժ են հնարել: Սատարկ քամու եղած միջոցին այդպիսի աղօրիքները ոչ միայն աչքը են աղում, այլև աւազ են բարձրացնում շինուելիան վերին յարկը, ուր պահում են այդ աւազը: Երբ հողմը դադարում է, այնժամանակ թողնում են որ աւազը թափուի աղօրիքի անիւների վրայ, որից աղօրիքն աւանդ հողմի այնպէս է բանում, ինչպէս գործել քամու ժամանակ:

Ձրի ժամացոյց. Փարիզում անցեալ տարի Տիւլըրիի պալատի այգու մէջ նոր ժամացոյց են շինել, որը ցոյց է տալի րոպէները, ժամերը, օրերի

թիւն ու ամսաթուերը, և սակայն առանց լարելու կամ հակաքաշ քարերը վեր բարձրացնելու։ Մի անգամ որ կարգի է բերւում, այնուհետև ջրի օգնութիւնով կանոնաւոր կերպով բանում է։ Քաղաքային ջրանցքից խողովակ է բերած գրա մօտ. ջրի հոսանքը թափւում է մի փոքրիկ արկղի մէջ, որը այնպէս է շինած որ մինչև մի որոշեալ բարձրութիւն միշտ ջրով լի է լինում։ Այդ արկղից ջուրն անդադար թափւում է անելի վրայ. ջուրը՝ 1 արշին բարձրութիւնից ընկնելով՝ շարժում է գլխաւոր անիւը. սա էս ամենապարզ ձևի արտաւտակի օգնութիւնով շարժում է միւս անիւներին։ Իսկ այդպիսի արկղ շինելը—որի մէջ ջուրը միշտ մի որոշեալ բարձրութիւն ունենար,—շատ հեշտ է։ Դրա համար հարկաւոր է արկղի կողքից որոշեալ բարձրութեան վրայ բացուածք թողնել։ Հոսող ջուրը հէնց որ կըհասնի այդ անցքին, դուրս կըթափուի, և օրեցն արկղը միշտ էլ լիքը կըլինի ջրի միևնոյն քանակութիւնով, չնայելով այն բանին, որ ջուրը հոսում է նեղքևից աւելի նեղլիկ անցքով։ Առանց այդպիսի կազմակերպութեան ջուրը չէր կարող հաւասարաչափ շարժում առաջացնել։ Ինչպէս օրինակ, հեշտաեռի ծորակից ջուրը միակերպ չէ թափւում, այլ սկզբից, քանի որ դեռ լիքն է, աւելի սաստկութիւնով է թափւում, իսկ յետոյ հետզհետէ աւելի ու աւելի թուլանում է, նայած թէ որչափով է պակասում։

Թղթից շիշերը են շինում այժմ և այնպէս են պատրաստում, որ ամենևին չի թրջվում ոչ ջրից ու ոչ էլ օրևէ հեղուկից և, որ գլխաւորն է, վայր ընկած ժամանակին էլ չի կտրւում։

Կոկայբոյսը։ Յաւ չգալու համար որպէս լաւ մէջոց բժիշկները այդ բոյսն են գործադրում։ Եթէ դրա խառնուրդից քանիմի կաթիլ աչքի մէջ ածուի, այնժամանակ կարելի է ազատօրէն ձեռքով կամ գործիքով դիպչել, որից ոչ միայն ցաւ չի զգացուիլ, այլև չի խմացուիլ թէ դիպչում են։ Մի օրիորդի ականջները ծակում էին օղի համար. նա սաստիկ վախենում էր, որ մի գուցէ շատ ցաւ տայ։ Ուստի բժիշկը խորհուրդ տուեց ականջի դմակը օծել կոկայի խառնուրդով. և՝ արմանք, օրիորդը մինչև անգամ չզգայ էլ թէ նր ականջը ծակում են։ Նմանը նկատել է նոյնպէս, որ եթէ կոկայի բիւրեղից մի հատ դրուի լեզուի վրայ, այնժամանակ լեզուն կրկորցնէ նր բոլոր զգացողութիւնը։ Իսկ հընկացնելը կարծիքով կօկան շուտով անդ է կացնում քաղցը, այդ պատճառով հեռու ձանապարհորդութեան գնալիս դրանից փոքրիկ դնդակներ են շինում և վերցնում հետները։



ԱՆԵԿԴՕՏ

Տէրտէրը մինը գալիս է տուն և կնկան ասում. «Իրիցկին ջան, իրիցկին, մի չորս ձու խաշիր տուր ուտեմ, վորս վեց-վեց է անում»։

Է՛հ, ինչն է առատ՝—գլուղի ձուն. իրիցկինն կախոյն վեր է կենում և ապրէն քանիմի րոպէից յետոյ չորս ձուն խաշած պատրաստ տալիս է մարդուն։ Տէրտէրս սաստիկ ախորճակով սկսում է ուտել... բայց հէնց վերջին պատառը կուլ է տալիս թէ ոչ, Հոգին աւանդում է։ Իրիցկինն սկսում է մարդու վրայ սգալ. «Ախր, այ տէրտէր, թէ որ պէտք է մեռնէիր, էլ այդ չորս ձուն ինչու՞ համար կերար. ես այդ չորս ձուն թխսրկանի տակը կդնէի, չորս ճուտ կդուզար, հաւ կդառնային, դրանք էլ ձու կածէին, ճուտեր կըհանէին, շատ հաւ կունենային, շատ ձու կածէին, սրի վէրը մենք կուտէինք, կէսն էլ կրծախէի ու մեր պակաս-պռատը կըհոգայի, իսկ հիմա ինչ անեմ, ինչ հոգը տամ գլխիս. ա՛յս մի տուն մանրերը հիմի ես ինչպէս պահեմ...»։ Եւ երբ պրծնում վերջանում է, էլի նորից սկսում է. «Ախր, այ տէրտէր, թէ որ պէտք է մեռնէիր... և այլն», և վերջացնելուն պէս էլի նորից ու նորից սկսում։

Երեք օրից յետոյ, ինչպէս կարգն է, տէրտէրի նաշը տանում են եկեղեցի։ Պատարագն արդէն ոկսուած է, մեր իրիցկինն էլ իր սուգն է կցել. «Ախր, այ տէրտէր, թէ

որ սլետաք է մեռնելիր, էլ այդ չորս ձուն ինչո՞ւ համար կերար»... Լայլն, Լայլն, կրկնում է Հա կրկնում։ Գասում կանգնած քահանաներից մինի համբերութիւնը հատնելով, մօտենում է իրիցկնկան. «Այ մեր, այ քոյր, ախր ամօթ է, խայտառակութիւն է, գոնէ պատարագից պատկառէիր, եթէ որ ժողովրդից չես քաշվում. ինչ ես առել անցկացել՝ «չորս ձուն ինչո՞ւ կերար, չորս ձուն ինչո՞ւ կերար». էլ մի ուրիշ բան գլուխս, թէ հէնց մենակ այդ է, օրհնածի կին»։

Իրիցկինը գլուխը վեր է բարձրացնում, որ մի լաւ տեսնէ իրան յանդիմանողին և նկատելով որ յանդիմանողը մի աչքով կոյր է. «Ֆա ինչ ասեմ, քո՛ւռ տէրտէր, բա ինչ ասեմ, քո՛ւռ տէրտէր, բա ինչ ասեմ, քո՛ւռ տէրտէր, բա ինչ ասեմ, քո՛ւռ տէրտէր...»։

Խեղճ տէրտէրը տեսնելով որ այդ խաղքուխայտառակութեան վերջը չի գալու. «Վայ անիծեալ լինիս դու, ասում է, էլի առաջուանն աստ, էլի առաջուանն աստ...։

Լ. ԵՒՈՆ։

ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ

Երեք տպարանական հասարակ նշաններով, այն է՝ գծերով, փակագծերով և կէտերով, կարելի է ներկայացնել զանազան ազգերի դէմքեր։ Այս անգամ դնում ենք Անգլիացու, Հրէայի և Չինացու դէմքերը։



1. Անգլիացի, 2. Հրէայ, 3. Չինացի։

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ա. Փատուրեան.

25) Բերանը ոսկրից,
Մօրուան է մոխց.
Ինքը թռչուն է՝
Փանօթ ամենուն,
Մեզ մօտ ապրում է.
Գտէք նրա անուն:

Նոյնը.

26) Երկու եղբայր մի ձորում
Իրար կպած են ապրում,
Բայց ինչ արած, անհաշտ են,
Միշտ իրար մխս են ուտում:

Առաջ. Մել. Զահինեան.

27) | | | | Այս չորս խազը երեք շինել:

ՉՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Տուր ինձ սուր, հուր, թուր.
Թուր, հուր, սուր, ինձ տուր:

*Նախընթաց № 4-ի մէջ եղած՝ հանելուկները և բեբուսի բացատրութիւնը.—*Բեբուս (Զատիկ) *Զեզ և մեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:* 20) *Կայծեր.* 21) *գետ.* 22) *խոփ.* 23) *Ծուխ:*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ:

Дозволено цензурою. Тифлисъ, 6 іюня 1885 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԱԽԱՑԽԱ. ԸՆԹ. ՔԱՐԱ. Մ. Ա.Թ. *«Զորս առակը» մեր հրատարակութիւնը չէ, ուրեմն ուղարկել անկարող ենք. հաղորդեցէք՝ մինչեւ 15 կ. ինչ գիրք մեր հրատարակութիւններից ուղարկել։*

ԱՍՏՐԱԽԱՆ. Գ. Զ. *Ձեր հաշիւները ժամանակին գրուել, կըստանայքը ոչ միայն № առաջինից այլ ձրի աւելորդ ընծայ էլ։ Առաջին երեք №№-ը սպառուած են, վոխարէնը կարող էք 75 կոպ. գրքերը ստանալ, ինչպէս ձեզ բաց նամակով յայտնել էինք, կամ թէ յետ ուղարկեցէք ստացած №№-ը և յանձնեցէք մէկին վերադարձնելի Զեզ 3 ր.։*

ՎԵՆԵՏԻԿ. Հ. Մ. *Շատ և շատ շնորհակալ ենք. շատ դեղեցիկ է. խորին շնորհակալութիւն, փոստով Ձեզ նամակ կըգրենք։*

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բ. Ղ. *Այո, պ. Աբծրունին դալիս է. մօտ օրերս այստեղ կըլինի։*

ՆՈՒԻԽ. Ա. Դ. *Գարունը դուք էլ էք երգում Հայմուռքով և գարմանքով հարցնում էք՝ ինչու այդ դեղեցկափետուրները եկան։ Հապա ո՜ւմ էիք սպասում։*

ՔԱՓՈՒՒ. Թ. Լ. *Անպատճառ, ինչ ասել կուզէք. բայց դարձեալ չենք տպել։*

Կ. ՊՕԼԻՍ. *Բուբ. Մանկ, խմբ. Ամենայն ուրախութիւնով ընդունում ենք Ձեր առաջարկութիւնը։ Շնորհակալ ենք, ստացանք։*

ՄՈՍԿՈՒԱ. Շ. Ա. *Վատ չէը լինել. բայց վաղօրոք խոստանալ անկարող ենք, ձուկը ջրումը սակարկութիւն ո՛նել չի լինել։*

ՎԱՆ. Վ. Ս. *Շատ և շատ ցաւում ենք, որ բոլորը կանոնաւոր չէք ստացել, աւելի քան ցաւում ենք, որ չստացածների փոխարէնն անկարող ենք ուղարկել, որովհետև նախորդ №№-ն արդէն սպառուել են։*

«ԱՂԲԻՒՐԻ» համբաւաբաշխութիւնը տեղափոխուեց Վանքի փողոցից Սօլօլակ Սերգիևսկի փողոցը, տուն № 2, «Մանկական դրադարանին» հիւս։

Բաց է ամեն օր ժամը 10-ից մինչև 2-ը կէսօրից յետոյ։

Աչքի առաջ ունենալով մեր ուսուցչուհիները և մեր ուսուցչիները, որոնք ցանկանում են պարապել երեխաների հետ ամեն առարկայից, լեզուներից և պատրաստել աշակերտներ զանազան ուսումնարանների համար, ու մեքենի պատուաւոր ընտանիքներ, որոնք ընդունում են դեշերօթիկներ երկու տարից ևս, առաջարկում ենք ցանկացողներին դիմել խմբագրութեան։

«Մանկական դրադարան - ընթերցարանը» բաց է ամեն օր, իսկ ոմն և կիրակի օրերը միայն մինչև կէսօր։ Դրադարան-ընթերցարանը լիքն է և պարբերաբար ստանում է հինգ նրանից լոյս տեսնելուց մանկական և պատանեկական հատուկ ընթերցանութեան յարմար պիտանի գրքերը մեր հայերէն, ռուսերէն, վրացերէն և մեր այլ լեզուներով։

„НОВОСТИ ДНЯ“

(ГОДЪ ТРЕТІЙ)

Ежедневная, политическая, общественная, литературная газета, которая кромѣ газетной программы, на страницахъ своихъ даетъ своимъ читателямъ рядъ портретовъ государственныхъ и общественныхъ дѣятелей, извѣстныхъ ученыхъ, писателей, артистовъ, адвокатовъ и вообще лицъ, составляющихъ интересъ дня.

Въ текущемъ полугодіи будутъ напечатаны нѣсколько оригинальныхъ и переводныхъ романовъ.

Полугодовая подписка

съ 1 іюля по 31 декабря 85 года:

Во всѣ города на 6 м.—5 р. 50 к., на 3 м.—3 р., на 1 м.—1 р.

Адресъ: „НОВОСТИ ДНЯ“, Москва.

Редак.-издат. А. Липскеровъ.

ԲՈՒԼԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

պատկերազարդ հատոր ածոյ, բարոյական, քրիստոնէական, պատմական, ուսումնական, աշխարհագրական և այլ պիտանի գիտելեաց։

Մանկական վէպեր, մանրավէպեր, զուարճալի խաղեր։

Հրատարակվում է կ. Պոլսում ամիսը երկու անգամ տետր տետր 16 երեսից բաղկացած։

Տարեկան գինը Ռուսաստանի համար 4 ռ.

Հրատարակիչք պ. Ն. կ. Պէրպէրեան և պ. Ս. Տէօվլէթեան։

Ռուսաստանում բաժանորդ գրուղները թող բարեհաճեն դիմել Թերթիս խմբագրութեանը՝—Тифлисъ. Редакція „Агбюръ“.

ԱՐՁԱԳԱՆՔ

շաբաթաթերթը վերսին կըսկսուի հրատարակուել առաջիկայ յունվարի 1-էն նախկին ծրագրով և առաջուան աշխատակիցներով մասնակցութեամբ։ «Արձագանքի» 1883 թ. բաժանորդները սեպտեմբեր ամսին կըստանան երեսուն տպագրական թերթից բաղկացած մի մեծակազմ գիրք գրական-գիտական բովանդակութեամբ։

«Արձագանքի» տարեկան գինն է 5 ռ.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція журнала „Арцаганкъ“.

Խմբ.-հրատ. Ա. Յովհաննիսեան։

«ԱՂԲԻՒՐԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ԵՒ ԹԻՓԼԻԶԻ ՅԱՅՏՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

«ԱՂԲԻՒՐԻ» ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

	Գինն է
1) «Աղբիւր» 1883 թ. փառակազմ	5 ռ.
Նոյնը անկազմ	4 ռ.
2) » (1884 թ. փառակազմ	4 ռ.
Նոյնը անկազմ	3 ռ.
3) Փայտաշէն խրճիթից՝ սպիտակ տունը (Ջէմս Գարֆիլդի կենսագրութիւնը) պատկերազարդ	60 կ.
4) Աւետարիւս, Հսկայ-Մըջիւն (պատկերազարդ)	40 »
Նոյնը փառակազմ	1 ռ.
5) Ժան Բատիստ Լիւլլի մանկութիւնը	10 »
Նոյնը փառակազմ	50 »
6) Պուշկին, Ոսկէ ձկնիկ (I սերիա ընտիր թղթի վրայ)	30 »
Նոյնը փառակազմ	1 ռ.
Նոյնը անկազմ (II սերիա)	5 »
7) Ռուսական աշխարհից	30 »
Նոյնը փառակազմ	1 ռ.